# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻԸ. ՏԱՐԻ ԹԻՒ 27 (1427) ՇԱԲԱԹ, ՅՈՒԼԻՍ 25, 2009
VOLUME 29, NO. 27 (1427) SATURDAY, JULY 25, 2009

Պաշտօնաթերթ՝ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ԼՂՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԿԻՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ ԿԸ ՆԱԽԱՏԵՍԷ ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄ

*Լեռնային Ղարաբաղի պաշտպանութեան բանակի նախկին հրամանատար Սամուէլ Բաբաեան Զորեքշաբթի, Յուլիս 22-ին կայացած ասուլիսի մը ընթացքին յայտարարած է, թէ Ատրպէյճան կը պատրաստուի պատերազմի, իսկ, մենք այդ չենք ուզեր հասկնալ:*

*«Ազատութիւն» ռատիոկայանի հարցին, թէ, դժգոհելով բանակցային գործընթացէն, ինչու Լեռնային Ղարաբաղի իշխանութիւնները վճռականօրէն չեն յայտարարեր, որ առանց իրենց, պաշտօնական Երեւանը իրաւունք չունի բանակցութիւններ վարել խնդրի առնչութեամբ, Սամուէլ Բաբաեան պատասխանած է. - «Արցախում չի կարող այսօրուայ գործող իշխանութիւնը դէմ գնալ այսօրուայ Հայաստանի իշխանութիւններին»:*

*Ղարաբաղի պաշտպանութեան բանակի նախկին հրամանատարի կարծիքով, Ստեփանակերտը պէտք է այսօրուընէ մասնակցի բանակցութիւններուն, քանի որ, հակառակ պարագային Լեռնային Ղարաբաղի համար այլեւս անիմաստ կ՚ըլլայ նստիլ բանակցութիւններու սեղանին, երբ արդէն համա-*

*Շար.ը էջ 4*

## ՄՈՍԿՈՒԱ «ՇԱՏ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ» ԿԸ ԳՆԱՀԱՏԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐՈՒ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

*Ռուսաստանի նախագահ Տմիթրի Մետվետեւի մասնակցութեամբ Շաբաթ, Յուլիս 18-ին Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներու միջեւ Մոսկուայի մէջ տեղի ունեցած հանդիպումը, ըստ Ռուսաստանի նախագահի օգնական Սերգէյ Պրիխոդկոյի, «երկարատեւ էր եւ, մեր գնահատմամբ, շատ կառուցողական»:*

*Յուլիս 17-ին՝ Հայաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարներ՝ Սերժ Սարգսեանի եւ Իլհամ Ալիեւի դէմ առ դէմ եւ ապա, Յուլիս 18-ին Ռուսաստանի նախագահի մասնակցութեամբ կայացած հանդիպումներէն ետք, կողմերը լրագրողներու համար համատեղ յայտարարութեամբ հանդէս չեն եկած:*

*ԵԱՀԿ-ի Մինսկի խումբի համանախագահները ըսած են, թէ բանակցութիւններու ընթացքին «յառաջընթաց չէ արձանագրուած, սակայն չէ եղած նաեւ ետընթաց»:*

*«Մենք նոր առաջարկներ ըրինք Մատրիտեան սկզբունքներու վերաբերեալ եւ նախագահները պէտք է մտածեն անոնց շուրջ», - ըսած է Մինսկի Խումբի Ռուսաստանցի համանախագահ Եուրի Մերզլեակով:*

*«Ազատութիւն» ռատիոկայանի հարցին, թէ քննարկուա՞ծ է արդեօք բանակցութիւններուն Լեռնային Ղարաբաղի մասնակցութեան հարցը, Մերզլեակով պատասխանած է, որ նման հարց այսօրուայ օրակարգի վրայ չկայ:*



**Ձախէն աջ՝ Իլհամ Ալիեւ, Տմիթրի Մետվետեւ եւ Սերժ Սարգսեան Մոսկուայի մէջ կայացած հանդիպման ընթացքին**

*Իսկ Ամերիկացի համանախագահ Մէթիւ Պրայզա նոյն առնչութեամբ ըսած է, թէ իրենք գիտեն Ղարաբաղի իշխանութիւններու դիրքորոշումը եւ պարբերաբար կը հանդիպին անոնց հետ եւ, «առաջարկութիւններ ընելու ժամանակ, հաշուի կ՚առնուի նաեւ այդ դիրքորոշումը»:*

*Իսկ Ֆրանսացի համանախագահ Պեռնար Ֆասիէ յայտարարեց, որ «հրապարակուած Մատրիտեան սկզբունքներու տեքստը ամբողջական չէ, կան կէտեր, որոնք չեն հրապարակուած:*

*Միւս կողմէ, Ատրպէյճանի ար-*

*Շար.ը էջ 4*

## ԱՄԵՐԻԿԱՑԻ ԳՈՆԿՐԷՍԱԿԱՆՆԵՐ ԿԸ ՊԱՏՐԱՍՏԵՆ ՆԱՄԱԿ ՄԸ՝ ՈՒՂՂՈՒԱԾ ՆԱԽԱԳԱՀ ՕՊԱՄԱՅԻՆ

*Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան Հայկական Հարցերու Համախմբումի ղեկավարներ՝ Ֆրանք Փալոն եւ Մարք Քըրք դիմած են Գոնկրէսի իրենց պաշտօնակիցներուն, ստանալու համար անոնց հաւանութիւնը՝ Հայ-Թրքական յարաբերութիւններուն վերաբերեալ նամակի մը շուրջ:*

*Գոնկրէսականներ Փալոն եւ Քըրք կոչ կ՚ընենք Ներկայացուցիչներու Տան անդամներուն, որպէսզի ստորագրեն նամակի մը տակ, որ պիտի յղուի նախագահ Պարաք Օպամային, մտահոգութիւն յայտնելու՝ Հայ-Թրքական յարաբերութիւններու բնականոնացման ուղղութեամբ յառաջդիմութեան բացակայութեան կապակցութեամբ:*

*«Ապրիլ 24-ին փոխանակ ճանչնալու Հայկական Ցեղասպանութիւնը, Վարչակազմը նախընտրեց զօրակցիլ Հայ-Թրքական յարաբերութիւններու բնականոնացման նոր ճամբու քարտէզի մը: Մինչ Հայաստանի կառավարութիւնը կը մնայ յանձնառու այդ ճամբու քարտէզին եւ երկար ժամանակէ իվեր կ՚առաջարկէ առանց նախապայմանի յարաբերութիւններ հաստատել Թուրքիոյ հետ, Թուրքիոյ հրապարակային յայտարարութիւնները եւ առած քայլերը Ապրիլ 24-էն աղին, կ՚ընթանան այս համաձայնութեան հակառակ ուղղութեամբ եւ կ՚անտեսեն Միացեալ Նահանգներու կեցուածքը, որ յարաբերութիւններու բնականոն դառնալը պէտք չէ ունենայ նախապայմաններ»,- ըսուած է Փալոնի եւ Քըրքի նամակին մէջ:*

*«Նկատելի է որ, Թուրքիան խափանելու համար Միացեալ Նահանգներու կողմէ Հայկական Ցեղասպանութեան ճանաչումը, հա-*

*Շար.ը էջ 4*

## «ՔՈՉԱՐԵԱՆՆ ՈՒ ՕՍԿԱՆԵԱՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԳՆԵՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՌԱՋ».- ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ՍԴՀԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՎԱՀԱՆ ՇԻՐԽԱՆԵԱՆ




**Վահան Շիրխանեան եւ Լիւդմիլա Յարութիւնեան. Կեդրոնը «Հայելի» ակումբի համադրողը**

*Երկուշաբթի, Յուլիս 20-ին Երեւանի «Հայելի» ակումբէն ներս տեղի ունեցած ասուլիսի մը ընթացքին Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան կենտրոնական վարչութեան Հայաստանի ներկայացուցիչ Վահան Շիրխանեան յայտարարեց որ Ռոբերդ Քոչարեան ու անոր իշխանութեան օրօք արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան պէտք է կանգնին Ղարաբաղի դատարանի առաջ եւ՝ Մատրիտեան այսօրուայ հակահայ սկզբունքներուն համար:*

*«Մատրիտեան սկզբունքները հակահայ են, հակահայաստանեան*

*Շար.ը էջ 4*

## «ՄԱՍԻՍԻ» ՏԱՐԵԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ

Տարեկան արձակուրդին առթիւ, »Մասիս« լոյս պիտի չտեսնէ յաջորդ երկու շաբաթներուն:

Այս շրջանին փակ պիտի ըլլայն նաեւ խմբագրութեան եւ վարչութեան գրասենեակները:

Մենք կը վերադառնանք Օգոստոս 15-ի մեր թիւով:

«ՄԱՍԻՍ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ՎԱՐՉՈՒԹԻՒԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԼՐՋԱՆԱԼՈՒ ՊԱՀԸ

*Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման՝ վերջերս հրապարակուած եւ մեծ աղմուկ բարձրացրած մադրիդեան սկզբունքների վերաբերեալ Հայաստանի իշխանութիւնների տեսակէտը մինչեւ երէկ յայտնի չէր:*

*Կարելի էր ենթադրել, որ ՀՀԿ-ն դրա վերաբերեալ ինչ-որ լղոզուած գնահատականներ կը տայ, Սերժ Սարգսեանը հերթական անգամ «կը փարատի քաղաքական ուժերի մտահոգութիւնները», եւ ամէն ինչ դրանով էլ կ՚աւարտուի: Բայց այս անգամ ամէն ինչ այլ կերպ տեղի ունեցաւ: ՀՀԿ մամուլի խօսնակ Էդուարդ Շարմազանովը մադրիդեան սկզբունքներն ու երեք նախագահների համատեղ յայտարարութիւնը գնահատեց որպէս մեզ համար «բաւականին շահեկան», «հայկական կողմերի շահերից բխող» եւ այլն: Աւելին՝ այդ երիտասարդը տարաւ-բերեց ու յայտարարեց, թէ «յստակ, փաստացի, երեք նախագահներն իրենց յայտարարութեան մէջ ամրագրում են ԼՂ փաստացի անկախութիւնը»:*

*Փաստօրէն, ՀՀԿ-ն որոշեց գնալ քաղաքական առճակատման ճանապարհով եւ «քեալլա տալ» Հայաստանի ու Ղարաբաղի գրեթէ բոլոր քաղաքական ուժերի հետ: Այսինքն, ի՞նչ է ասում ՀՀԿ-ն: Ասում է, որ ազատագրուած տարածքները վերադարձնելը լաւ էլ հայանպաստ լուծում է, դա Սերժ Սարգսեանի փայլուն դիւանագիտական յաջողութիւնն է, իսկ եթէ այլ քաղաքական ուժերի ներկայացուցիչներ այլ կարծիք ունեն, դա իրենց իրաւունքն է: Խնդիրն ընդամէնը այն է, որ տուեալ դէպքում «այլ քաղաքական ուժեր» ասելով պէտք է հասկանալ բացարձակապէս բոլորին՝ Սերժ Սարգսեանից բացի, որովհետեւ վստահ չենք, որ նոյն ՀՀԿ-ում բոլորն են տարածքների վերադարձը «հայանպաստ լուծում» համարում:*

*Հարց է ծագում՝ իսկ ՀՀԿ խօսնակից բացի կա՞ն էլի մարդիկ, ովքեր մադրիդեան սկզբունքները համարում են հայկական կողմի համար «բաւականին շահեկան»: Այո, կան, բայց՝ ոչ Հայաստանում: Նման կարծիքի են, օրինակ, Ադրբեջանի խորհրդարանի փոխխօսնակ Զիաֆէթ Ասկերովը, Ադրբեջանի դեմկուսի նախագահ Սարդար Ջալալօղլին, Թոֆիկ Զուլֆուղարովը եւ այլն: Հասկացա՞ք, թէ ինչ է կատարւում: Հրապարակուել է փաստաթուղթ, այդ փաստաթղթին բացայայտօրէն դէմ են արտայայտւում ե՛ւ Հայաստանի ու Ղարաբաղի քաղաքական ուժերը, ե՛ւ ԼՂՀ իշխանութիւնները, ու բանից պարզւում է, որ ՀՀԿ-ի գնահատականները համընկնում են միայն զանազան ասկերովների ու ջալալօղլիների գնահատականների հետ: Մեկնաբանութիւններն աւելորդ ենք համարում:*

*Բայց արդեօ՞ք տուեալ դէպքում իսկապէս գործ ունենք ՀՀԿ պաշտօնական տեսակէտի հետ: Իսկ գուցէ Էդուարդ Շարմազանովին պարզապէս ինչ-որ տեքստ են դէմ տուել, ու նա էլ, առանց հասկանալու, պատանեկան եռանդով իրեն մեյդան է գցել ու դատողութիւննե՞ր է անում: Չէ, եկէք ճիշդ հասկանանք: Եթէ հրապարակուած սկզբունքներն իսկապէս մեզ համար շահեկան լինէին, ինչո՞ւ պիտի իշխանութիւնները թոյլ տային, որ այդ փայլուն նուաճումը հասարակութեանը ներկայացներ ինչ-որ երկրորդական-երրորդական դէմք: Աւելի հաւանական է, որ իշխանութիւնները դիտմամբ են այդ առաքելութիւնը դրել ինչ-որ անկապ դէմքի ուսերին, որպէսզի յետոյ, եթէ պէտք լինի, յայտարարեն, թէ «դէ հիմա ջահել ա, անիմաստ բաներ ա ասել, դա ի՞նչ կապ ունի Հայաստանի իշխանութիւնների պաշտօնական դիրքորոշման հետ»: Եւ իսկապէս էլ, երկրում արտգործնախարարութիւն կա, նախագահի աշխատակազմ կա, ինչո՞ւ է Հայաստանի ու Ղարաբաղի համար կարեւորագոյն այս փաստաթուղթը մեկնաբանում ՀՀԿ մամուլի խօսնակը:*

*Այս հարցում որոշակի յստակութիւն մտցնելու նպատակով կը ցանկանայինք ընդամէնը երկու հարց ուղղել Հայաստանի իշխանութիւններին: Առաջին. Էդուարդ Շարմազանովն իսկապէ՞ս ներկայացնում է ՀՀԿ պաշտօնական դիրքորոշումը, եւ եթէ այո, ապա ՀՀԿ-ն որտե՞ղ եւ ի՞նչ ֆորմատով է յստակեցրել այդ դիրքորոշումը: Երկրորդ. եթէ ներկայացուածը ՀՀԿ պաշտօնական դիրքորոշումն է, արդեօ՞ք դա նշանակում է, որ ՀՀԿ-ն դա համաձայնեցրել է Սերժ Սարգսեանի հետ, եւ կարո՞ղ ենք եզրակացնել, որ դա նաեւ Սերժ Սարգսեանի գնահատականն է. իսկ եթէ այս հարցում ՀՀԿ-ի եւ Սերժ Սարգսեանի դիրքորոշումները չեն համընկնում, պատրաստո՞ւմ է արդեօք ՀՀԿ-ն արտահերթ համագումար հրաւիրել եւ Սերժ Սարգսեանին հեռացնել կուսակցութեան շարքերից:*

*Սրանք իսկապէս շատ կարեւոր հարցեր են, որովհետեւ Հայաստանի ու Ղարաբաղի հասարակութիւնները վերջապէս պիտի հասկանան, թէ ինչ է մտածում Սերժ Սարգսեանն այս ամէնի մասին: Որովհետեւ եթէ նա իսկապէս «մադրիդեան սկզբունքներ» կոչուող այս խայտառակութիւնը համարում է հայկական կողմի համար շահեկան, ուրեմն՝ այս անգամ արդէն հասարակութեան լրջանալու պահն է:*

**ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ**
**«ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»**

# ԿՐԻՄԻՆԱԼ «ԱԿՏԻՒԻՍՏՆԵՐ»

*Երբ թերթերը գրում են Գիւմրիի քաղաքապետ Վարդան Ղուկասեանի որդու՝ Սպարտակի հերթական յանցագործութեան մասին, պարոն Ղուկասեանը սովորաբար մամուլի ասուլիս է հրաւիրում եւ բողոքում, թէ ինքը գիշեր-ցերեկ աշխատում է, բարիքներ է ստեղծում, քաղաքի աշխատաւորները տեսնում եւ գնահատում են նրա ջանքերը, իսկ ահա ՀՀՇ-ականները ուզում են նրան վարկաբեկել: Թէ ինչպէս են մեր իշխանաւորները աշխատում, եկէք աւելի լաւ է չխօսենք: Երկրի վիճակը ինձ յիշեցնում է Մամուլի շէնքի վերելակները, որոնք որքան ես յիշում եմ, (այսինքն՝ առնուազն 15 տարի), վերանորոգւում են գրեթէ ամէն օր: Վերանորոգողները իսկապէս աշխատում են, իսկ մենք օրը մէջ ոտքով ենք բարձրանում 15-րդ հարկ: Մինչեւ 36 տարուայ հնութեան վերելակները չփոխուեն, խնդիրը չի լուծուի: Այնպէս որ, մեր պաշտօնեաների «աշխատելը» խիստ յարաբերական է: Բայց դա այլ խնդիր է:*

*Այստեղ խօսքը այն մասին է, որ կոռումպացուած, լկտի, ամբարտաւան պաշտօնեաների ընդհանուր ֆոնի վրայ լինում են այնպիսիք, որոնք այդ յատկութիւնները դրսեւորում են առաւել ցայտուն եւ անսքօղ ձեւով: Օրինակ, մեր բուհերի ռեկտորների մէջ դժուար թէ «մայր Թերեզա» յայտնուի, բայց Մանկավարժականի ռեկտոր Արտուշ Ղուկասեանն առանձնանում է իր կրիմինալ հակումներով: Կամ՝ ոչ մի մարզպետ իր բարեմասնութիւններով չի փայլում, սակայն դրանց միջի «ծաղիկը», անշուշտ, Սուրիկ Խաչատրեանն է: Ճիշդ նոյն ձեւով թաղապետերի մէջ առանձնակի էր «փայլում» Թոխմախի Մհերի «աստղը»: Թե ինչու է մեկին թոյլատրւում, պայմանականօրէն ասած, միայն գողանալ, իսկ միւսին՝ նաեւ մարդկանց վրայ աւազակային յարձակումներ գործել, դրա վերաբերեալ ես ունեմ իմ տեսութիւնը: Լինում են սովորական կրիմինալներ, որոնք, իհարկէ, անհրաժեշտութեան դէպքում կը ծառայեն իշխանութիւններին, եւ կրիմինալ «ակտիւիստներ», որոնք ոչ միայն կը ծառայեն, այլեւ կը ջարդեն «թշնամիների» գլուխները (օրինակ, ընտրութիւնների ժամանակ): Ահա նրանց հնարաւորութիւն է տրւում ապրել լիակատար անպատժելիութեան պայմաններում:*

*Վերոյիշեալ «արտօնեալներից» է, անշուշտ, Գիւմրիի քաղաքապետը: Իհարկէ, մեր մնացած բարձրաստիճան պաշտօնեաների որդիները նոյնպէս ունեն «ճիփեր», որոնք քշում են իրենց ուզածի պէս, անօրինական զէնքեր եւ հաստավիզ «տղերքի» ջոկատներ: Բայց «պապաների բալաներից» ոչ բոլորն են հանդէս գալիս որպէս ռեցիդիւիստներ: Մի քանի անգամ կրկնելով միեւնոյն յանցագործութիւնը՝ զինուած խուլիգանութիւնը, նա չի ստանում արժանի պատիժը, եւ դա երիտասարդին գցում է մի տեսակ «կրիմինալ էյֆորիայի» մէջ: Աւելի՞ն՝ որդու քաջագործութիւնները որեւէ ձեւով չեն անդրադառնում հօր կարիերայի վրայ: Այդ Արեւմուտքում է, որ հաշուի են նստում հասարակական կարծիքի հետ, եւ նման զաւակ ունեցող պաշտօնեան չէր համարձակուի երեւալ ժողովրդի աչքին: Մեզ մօտ ընդհակառակը՝ ամէն մի կրակոցից, ծեծից կամ պայթիւնից յետոյ մեր իշխանաւորները աւելի շատ են հպարտանում իրենց յանցագործ ժառանգներով: Իսկապէս, շատ «դուխով» եւ «թասիբով» տղերք են: Իրենց նման:*

**ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ**
**«ԱՌԱՒՕՏ»**

# ԶԳՈՒՇԱՑՈՒՄ ԲԱՆԱԿՑՈՂՆԵՐԻՆ

*Մինչ Մոսկուայում հանդիպում են Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները, եւ ղարաբաղեան խնդրի կարգաւորման վերջին չորիխներն են գծագրւում, ԼՂՀ բնակչութիւնն ալեկոծւում է: Անշուշտ, աշխարհի հզօրներին եւ մեր երկու երկրների ղեկավարներին քիչ է հետաքրքրում նրանց կարծիքը՝ բանակցութիւնների սեղանին նրանց շահերն են դրուած: Սակայն դա չի նշանակում, որ հնարաւոր է անտեսել այդ հողի վրայ ապրող ժողովրդի կարծիքը եւ ինչ-որ հանգուցալուծման համնել՝ հակառակ նրա կամքի: Ի վերջոյ՝ յայտնի է, որ հողը նրա վրայ ապրողինն է, այլ ոչ թէ միջազգային հանրութեան կամ գերտէրութիւններինը:*

*ԼՂՀ հասարակական մի շարք կազմակերպութիւնների տարածած յայտարարութիւնում կոշտ գնահատականներ ու զգուշացումներ են հնչել: Դրանք խօսում են իրավիճակի շիկացածութեան մասին եւ արժանի են ամենայն յարգանքի: Կարդացէք ինքներդ. «Կարծում ենք, որ ադրբեջանա-ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման շուրջ բանակցային գործընթացն առանց ԼՂՀ ներկայացուցիչների մասնակցութեան ապացուցել է իր բացարձակ անկարողութիւնը. կոչ ենք անում վերջ տալ այս քաղաքական ֆարսին եւ ադրբեջանա-ղարաբաղեան յարաբերութիւնների կարգաւորման հիմք ընդունել առկայ իրողութիւնը, արմատապէս վերանայել ներկայիս ձեւաչափը եւ բանակցութիւնների հիմնարար սկզբունքները»: «Արցախի ժողովուրդը մէկընդմիշտ որոշել է իր ճակատագիրը՝ բոլոր իրաւական նորմերի եւ ձեւաչափերի անթերի պահպանմամբ համազգային հանրաքուէի հիման վրայ ԼՂՀ անկախութիւնը հռչակելով»: «Մենք յիշեցնում ենք, որ Լեռնային Ղարաբաղի վերաբերեալ որեւէ համաձայնագիր չի կարող օրինական ուժ ունենալ, եթէ այն չի արտացոլում ԼՂՀ քաղաքացիների կամքն ու օրինական իրաւունքները, եւ եթէ այդ փաստաթղթի տակ չկայ ԼՂՀ ընտրուած նախագահի ստորագրութիւնը»:*

**«ՀՐԱՊԱՐԱԿ»**

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
*http://www.massisweekly.com*

**MASSIS Weekly**
**Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

**ՀԱՅԱՍՏԱՆ**

# ԴԱՒԻԹ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ. «ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԹԵՒԱԿՈԽԵԼ Է ՉԱՓԱԶԱՆՑ ՄՏԱՀՈԳԻՉ ՀԱՆԳՐՈՒԱՆ»

*Իլհամ Ալիեւի եւ Սերժ Սարգսեանի վերջին՝ մոսկովեան հանդիպումը մի շարք տարրերով տարբերւում էր նախորդ համանման հանդիպումներից, ինչը վկայում է, որ Ղարաբաղեան կարգաւորման գործընթացում տեղի են ունեցել շատ լուրջ փոփոխութիւններ: Այդ մասին «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցում ասաց Հայ ազգային կոնգրես ընդդիմադիր միաւորման ներկայացուցիչ Դաւիթ Շահնազարեանը:*



Դաւիթ Շահնազարեան

*Նրա գնահատմամբ՝ գործընթացը թեւակոխել է չափազանց մտահոգիչ հանգրուան, եւ Սարգսեան - Ալիեւ հանդիպումը հարկ է դիտարկել հենց այդ համատեքստում:*

*«Ակնյայտ է, չնայած այդ մասին կարծես թէ չի խօսւում, որ եղել են լուրջ պայմանաւորուածութիւններ, ես կարծում եմ՝ նոր որակ է ստացել գործընթացը, եւ տարրեր կան դէյտոնեան գործընթացի՝ նկատի ունեմ, երբ եռանախագահող երկրները, աշխարհի հզօրագոյն երկրները, կարծես թէ, ընդհանուր շահեր ունեն եթէ ոչ վերջնական կարգաւորման գնալու, ապա, յամենայն դէպս, էական շատ լուրջ փոփոխութիւններ մտցնելու հակամարտութեան ներկայիս ստատուս-քվո կոչուող վիճակում», - յայտարարեց ընդդիմադիր գործիչը:*

*Այդ թւում, ըստ Դաւիթ Շահնազարեանի՝ էապէս փոխւում է չփման գիծը, խօսք է գնում միջազգային ներկայութեան մասին, եւ այս ֆոնի վրայ՝ ոչ մի ակնարկ ազգերի ինքնորոշման սկզբունքի մասին:*

*Շահնազարեանի գնահատմամբ՝ սրանք այն 6 բնութագրական տարրերից են, որոնք բացայայտուեցին համանախագահ երկրների ղեկավարների վերջին համատեղ յայտարարութեան մէջ, եւ որոնք էլ, ըստ էութեան, դարձան մոսկովեան բանակցութիւնների հիմնահողը:*

*«Ակնյայտ է, որ հայկական կողմը՝ Հայաստանի ներկայիս իշխանութիւնները, անընդհատ գնում է նորանոր զիջումների», - յայտարարեց Հայ ազգային կոնգրեսի ներկայացուցիչը:*

# «ՍՊԱՌՆԱԼԻՔ ԵՆ ՈՉ ԹԷ ՄԱՏՐԻՏԵԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ, ԱՅԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՈՒԼՈՒԹԻՒՆԸ»

*«Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահների՝ Մոսկուայում կայացած հանդիպումը կարեւոր եւ յիշարժան էր, բայց ես չեմ տեսնում իրական վտանգ եւ որեւէ հնարաւոր համաձայնագրի ստորագրում»,- այսօր «Հայեացք» մամուլի ակումբում յայտարարել է Ռազմավարական եւ ազգային հետազօտութիւնների հայկական կենտրոնի ղեկավար Ռիչարդ Կիրակոսեանը:*



ՌԱՀՀԿ ղեկավար Ռիչարդ Կիրակոսեան

*Շարունակելով՝ Կիրակոսեանն ասել է, որ Ռուսաստանը, ԱՄՆ-ն եւ Եւրոպան շահագրգռուած են ղարաբաղեան խնդրի կարգաւորմամբ, քանի որ այն տարածաշրջանի ամենավերջին սառեցուած հակամարտութիւնն է, մինչդեռ, ինչպէս փորձագէտն է նշել, ոչ մի ճնշում չի կարող ստիպել լուծել ղարաբաղեան հակամարտութիւնը, քանի դեռ Լեռնային Ղարաբաղի «ժողովրդավարական ընտրութիւնների միջոցով ընտրուած իշխանութիւնը» չի մասնակցում բանակցութիւններին:*

*Անդրադառնալով հարցին, թէ հրապարակուած Մադրիդեան առաջարկներում ինչ է շահեկան Հայաստանին, ինչը՝ Ատրպէյճանին, Ռիչարդ Կիրակոսեանն ասել է, որ Մատրիտեան առաջարկներում շահեկան կէտեր կան թէ Հայաստանի, թէ Ատրպէյճանի համար: «Սկզբունքներն ինձ չեն անհանգստացնում, ինձ մէկ այլ մարտահրաւէր է անհանգստացնում»,- յայտարարել է Ռիչարդ Կիրակոսեանն ու մեկնաբանել, թէ իրեն անհանգստացնում է Հայաստանի թուլութիւնը:*

*Ըստ փորձագէտի՝ Հայաստանը, ներքին հասարակութեան առումով մասնատուած է: Ռիչարդ Կիրակոսեանն ասել է, որ Հայաստանի թուլութիւնը կապուած է կառավարութեան լեգիտիմութեան պակասի եւ քաղաքական ճգնաժամի հետեւանքով հասարակութեան մէջ առաջացած բեւեռացման հետ:*

# ՍՏԵՓԱՆ ՍԱՖԱՐԵԱՆ. «ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄՍՈՒԱՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՏԱՀԱԿԱՆ ՉԷ»

*Հայաստանի Ազգային ժողովի «Ժառանգութիւն» ընդդիմադիր խմբակցութեան պատգամաւոր Ստեփան Սաֆարեանը պատահական չի համարում, որ մոսկովեան վերջին բանակցութիւնների ժամանակ որոշուեց Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահների յաջորդ հանդիպումը նշանակել հոկտեմբերին:*



«Ժառանգութիւն» պատգամաւոր Ստեփան Սաֆարեան

*«Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում տակաւին վաղ համարելով մոսկովեան հանդիպմանը ամբողջական գնահատական տալը, «քանի դեռ չկայ լիարժէք տեղեկատուութիւն», ընդդիմադիր պատգամաւորը, այդուհանդերձ, հնարաւոր համարեց որոշակի դատողութիւններ անել արդէն համանախագահների արած որոշ յայտարարութիւնների հիման վրայ:*

*Առաջին եւ թիւ մէկ եզրահանգումը, ըստ նրա, կապուած է նախագահների յաջորդ հանդիպման համար հոկտեմբեր ամիսը ընտրելու հետ: «Ես ուզում եմ վերստին յիշեցնել, որ որքան էլ յայտարարւում է, թէ Ղարաբաղեան խնդրի կարգաւորման գործընթացը զուգահեռ գործընթաց է հայ - թուրքական յարաբերութիւնների կարգաւորմանը, բայց հոկտեմբերին վերջնականապէս պարզ կը դառնայ՝ բացւո՞ւմ է արդեօք հայ - թուրքական սահմանը, թէ՞ ոչ, եւ արդեօ՞ք Սերժ Սարգսեանը մեկնում է (աշխարհի 2010 թուականի առաջնութեան ընտրական փուլի Թուրքիա - Հայաստան) պատասխան ֆուտբոլային խաղը դիտելու: Այս կտրուածքով, կարծում եմ, ժամանակացոյցը ընտրուած է ոչ պատահականօրէն, քանի որ թուրքական կողմին եւ ատրպէյճանական կողմին հանգստացնելու համար ճիշդ է տուեալ ժամանակահատուածում հերթական հանդիպման նշանակումը», - պարզաբանեց Սաֆարեանը:*

*Ինչ վերաբերում է քաղաքական շրջանակներում առկայ մտավախութիւններին, թէ սպասւում է Ղարաբաղի հարցով շրջանակային համաձայնագրի ստորագրում, ինչը, սակայն, Մոսկուայում դա տեղի չունեցաւ՝ պատգամաւորը ընդգծեց.*

*- «Խնդիրն այն է, որ նման փաստաթղթի ստորագրում հնարաւոր է ցանկացած պահի, որովհետեւ բանակցութիւնների ընթացքը այնպիսին է, որ, այնուամենայնիւ, կարող են պարտադրել, որպէսզի ստորագրուի ինչ-որ մի փաստաթուղթ արդէն իսկ կայացած համաձայնութիւնների շրջանակներում: Խնդիրը այն չէ, թէ կոնկրետ ո՞ր հանդիպման ընթացքում դա կարող է ստորագրուել, խնդիրը այն է, որ, ըստ էութեան, դա կարող է տեղի ունենալ ցանկացած պահի, քանի որ այս մեթոտաբանութեամբ ընթացող բանակցութիւնների պայմանաւորուածութիւնների մէկը հենց դա է հանդիսանում»:*

# ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՅԵՏՈՅ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԸՆԴԴԻՄՈՒԹԵԱՆԸ

*Հայ Ազգային կոնգրեսի մամուլի ծառայութիւնից տեղեկա-ցնում են, որ Յուլիսի 20-ին ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը հանդիպել է Եւրո-պական Միութեան Եռեակի պատուիրակութեանը՝ Շուեդիայի ԱԳ նախարար Կարլ Բիլդտի գլխաւորութեամբ:*

*Հանդիպման ընթացքում քննարկուել են Լեռնային Ղարաբաղի - հայ-թուրքական յարաբերութ-իւնների կարգաւորման հեռանկար-ները, Հայաստանի տնտեսական վիճակը - յատկապէս համատարած կոռուպցիայի առկայութիւնը, ժողովրդավարութեան - մարդու իրաւունքների ոլորտում առկայ ճգնաժամը, մասնաւորապէս՝ քաղբանտարկեալների ազատ արձակման խնդիրը: Քննարկուել է նա- մարտի 1-ի սպանութիւնների բացայայտման հարցը:*

*Հանդիպմանը մասնակցել է Հայ ազգային կոնգրեսի կեդրո-նական գրասենեակի ներկայացուցիչ Աւետիս Աւագեանը:*

# ՄԱԱ ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵԼ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆԻՆ

*Մամուլի ազգային ակումբն իր տարակուսանքն է յայտնում Հայկական ժամանակ օրաթերթի գլխաւոր խմբագիր Նիկոլ Փաշինեանի կալանաւորման կապակցութեամբ համաներումը որպէս բարի կամքի - մարդասիրութեան դրսեւորման իշխանութիւնների յայտարարութիւնների համատեքստում:*



Հայկական ժամանակ օրաթերթի խմբագիր Նիկոլ Փաշինեան

*Հաշուի առնելով՝*

*- Մարտի 1-ի դատաիրաւական գործընթացների հանդէպ հասարակութեան անվստահութիւնը;*

*- հասարակական անհամա-ձայնութեան մեղմացման - մարտի 1-ի հետեւանքները յաղթահարելու անհրաժեշտութիւնը;*

*- մարդու իրաւունքների ապահովման գործում իշխանութիւնների պարտաւորութիւնները;*

*- Հայկական ժամանակի գլխաւոր խմբագիր Նիկոլ Փաշինեանի դերը հայաստանեան նորագոյն շրջանի մամուլի կայացման գործում:*

*Մամուլի ազգային ակումբը ՀՀ իշխանութիւններին կոչ է անում ազատ արձակել Հայկական ժամանակ օրաթերթի գլխաւոր խմբագիր Նիկոլ Փաշինեանին:*

*Մամուլի Ազգային Ակումբ*
*21.07.09*

# ԱՀՄԵՏ ԴԱՎՈՒԹՕՂԼՈՒՆ ՄԻՆՉԵՒ ՀՈԿՏԵՄԲԵՐ ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ ԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ Է ԱԿՆԿԱԼՈՒՄ



Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլու

Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն, Թուրքական լրատուամիջոցների փոխանցմամբ, Յուլիսի 21-ին յայտարարել է, որ հայ-Թուրքական հաշտեցման գործընթացը կանգ չի առել:

Ըստ Today's Zaman Թերթի, Դավութօղլուն ասել է, Թէ մինչեւ երկու երկրների ֆուԹպոլի հաւաքականների միջեւ կայանալիք հերԹական հանդիպումը, որը տեղի է ունենալու հոկտեմբերին, պաշտօնական Անգարան դրական զարգացումներ է սպասում Թուրք-հայկական յարաբերուԹիւնների կարգաւորման առումով:

«Երկու կողմում էլ շարունակում է առկայ մնալ քաղաքական կամքը, որը շատ ուժեղ է», - յաւելել է Դավութօղլուն:

Թուրքական Թերթերի փոխանցմամբ, արտգործնախարարը խուսափել է յստակ պատասխանել այն հարցին, Թէ ե՞րբ կարելի է ակնկալել հայ-Թուրքական սահմանի բացումը, կրկին ընդգծելով, սակայն, որ դրական զարգացումներ են ակնկալւում 2009 Թուականի ընԹացքում:

Խօսելով հայ-Թուրքական յարաբերուԹիւնների մասին՝ ԴավուԹօղլուն նաեւ անդրադարձել է ղարաբաղեան հարցին՝ նշելով, որ ստատուս քվոյի պահպանումը որեւէ մեկին ձեռնտու չէ:

«ՀակամարտուԹեան կարգաւորման գործընԹացը ակտիվանում է, - ասել է Թուրքիայի արտգործնախարարը՝ յաւելելով, - «Երկու գործընԹացները փոխկապակցուած են եւ դրական ազդեցուԹիւն կունենան միմեանց վրայ»:

Երէկ Երեւանում Հայաստանի արտգործնախարար Էդուարդ Նալբանդեանը նոյնպէս լաւատեսուԹիւն էր արտայայտել հայ-Թուրքական երկխօսուԹեան վերաբերեալ, շեշտելով, սակայն, որ ապրիլի 23-ի հայ-Թուրք-շուէյցարական եռակողմ հուշակագրից յետոյ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ որեւէ նոր փաստաԹուղԹ չի ստորագրուել, եւ Հայաստանը պատմաբանների համատեղ յանձնաժողով ստեղծելու՝ Թուրքիայի առաջարկին համաձայնուԹիւն չի տուել:

# ԹԵՀՐԱՆ-ԵՐԵՒԱՆ ՉՈՒԵՐԹԻ ԱՂԵՏԻՑ ՅԵՏՈՅ



Թեհրան-Երեւան օդանաւի կործանումէն յառաջ եկած փոսը

Ի տարբերուԹիւն երեք տարի առաջ Սոչիի մատոյցներում աւիավԹարի ենԹարկուած Ա-320 օդանաւի, Թեհրան-Երեւան չուերԹի Տու-154 օդանաւի աղէտը կարծես Թէ հանրուԹեան ուշադրուԹիւնից դուրս մնաց շատ արագ: Գուցէ պատճառն այն է, որ այդ օրերին հանրուԹեան ուշադրուԹիւնը կենտրոնացած էր Ղարաբաղի հակամարտուԹեան շուրջ առկայ զարգացումների վրայ, եւ մի քանի օրով շեղուելով կամ կիսուելով օդանաւի աղէտի ուղղուԹեամբ, հասարակուԹիւնը կրկին «վերադարձաւ» Ղարաբաղի կարգաւորման, մասնաւորապէս Սարգսեան-Ալիեւ հանդիպման վրայ: Գուցէ նաեւ պատճառն այն էր, որ Թեհրանից Թռչող օդանաւում չկային յայտնի անուններ, չկային օրէնքով գողեր, նախկին բարձրաստիճան պաշտօնեաներ կամ բարձրաստիճան պաշտօնեաների հարազատներ:

Զարմանալի է սակայն մի հանգամանք եւս: Խօսքը աղէտի պատճառների ուսումնասիրուԹեան մասին է: Ինչքան յայտնի է, այդ ուսումնասիրուԹիւնն իրականացնողների շրջանակից դուրս է մնացել հայկական կողմը, եւ պատճառների ուսումնասիրուԹիւնն իրականացնելու են ռուս եւ իրանցի մասնագէտներ: Մինչդեռ օդանաւի մէջ կային Հայաստանի քաղաքացիներ եւ տրամաբանական կը լինէր, որ Հայաստանն էլ հաւասարապէս մասնակցեր աղէտի պատճառները պարզելու աշխատանքին:

Սակայն ամէնից ուշագրաւը Թեհրանի իրանական իշխանուԹեան արձագանքն էր: Օդանաւի աղէտից անմիջապէս յետոյ Իրանի իշխանուԹիւնը տարածեց տեղեկատուուԹիւն, Թէ երկրի օդանաւերի պարկը չի ԹարմացւուԹ ամերիկեան պատժամիջոցների պատճառով, որոնք Թոյլ չեն տալիս Իրանին ձեռք բերել Արեւմտեան արտադրուԹեան օդանաւեր: Դա տարածուեց ի պատասխան տեղեկուԹեան, որ Իրանում օդային աղէտները վերջին տարիներին յաճախակիացել են, քանի որ այդ երկրի օդանաւային պարկը բաւական հին է:

Փաստացի, Իրանի ղեկավարուԹիւնն ընդունում է, որ հնուԹեան խնդիր կա, սակայն դրա համար պատասխանատուուԹիւնը փորձում է դնել Ամերիկայի վրայ, խօսելով պատժամիջոցների մասին: Բայց չէ որ Իրանը կարող է գնել ռուսական նոր օդանաւեր: ՄիԹէ արժէ ամերիկեան պատժամիջոցների դէմ խօսելու առիԹի սպասելիս վտանգի ենԹարկել Իրանի օդային փոխադրումների ծառայուԹիւնից օգտուող մարդկանց:

# ՆԱԽԿԻՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ ԿԸ ՆԱԽԱՏԵՍԷ

Շարունակուած էջ 1-էն

ձայնեցուած ըլլան հակամարտուԹեան կարգաւորման հիմնական սկզբունքները:

Խօսելով հակամարտուԹեան խաղաղ լուծման հեռանկարի մասին՝ Բաբեան ըսած է, Թէ ինքը համոզուած է, որ տեսանելի ապագային հնարաւոր չէ հիմնախնդրի շուրջ ինչ-որ համաձայնուԹեան յանգիլը, քանի որ Պաքուի պահանջները չեն արտայայտեր իրականուԹիւնը: Ան աւելցուցած է ըսելով,- «Այն, որ Հայաստանի իշխանուԹիւնները 7 շրջան գիջում են Ատրպէյճանին, դա փաստ է: Բայց հարցն այն է, Թէ Ատրպէյճանը բաւարարուո՞ւմ է այդ 7-ով: Ոչ: 12-ն է ուզում՝ Ղարաբաղն էլ հետը»:

# ԱՄԵՐԻԿԱՑԻ ԳՈՆԿՐԷՍԱԿԱՆՆԵՐ

Շարունակուած էջ 1-էն

մաձայնեցաւ ճամբու քարտէզին, որու գործադրուԹեան անցնելու նպատակ չունի երբեք:

Հետեւաբար, մենք այս նամակը կ՛ուղարկենք նախագահ Օպամային, որպէսզի պահանջենք վարչակազմէն՝ յարաբերուԹիւններու բնականոնացման եւ Ցեղասպանութեան ճանաչման հարցերը անջատելու իրարմէ եւ գործադրուԹեան դնելու նախկին յանձնառուԹիւնները՝ Հայկական Ցեղասպանութեան պաշտօնական ճանաչման ուղղուԹեամբ»-. կ՛եզրակացնէ Գոնկրէսի անդամներուն ուղղուած նամակը:

# ՇԱՏ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ

Շարունակուած էջ 1-էն

տաքին գործոց նախարար Էլմար Մամետեարով Պաքուի մէջ յայտարարած է, Թէ Ղարաբաղեան հակամարտուԹեան կարգաւորման հարցով որոշակի յառաջընԹաց կայ եւ աշխատանքներ կը տարուի, մասնաւորապէս, հակամարտուԹեան կարգաւորման այնպիսի սկզբունքներու համաձայնեցման հարցով, ինչպիսիք են՝ «հայկական զօրքերու դուրսբերումը գրաւեալ տարածքներէն», որմէ յետոյ, ըստ Մամետեարովի՝ «կը բարձրացուի փախստականներու վերադարձի հարցը»:

Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան, տարածաշրջանային այցով Հայաստան ժամանած Եւրամիութեան նախագահող Շուէտի արտաքին գործոց նախարար Քարլ Պիլտի հետ տեղի ունեցած միատեղ մամլոյ ասուլիսի ժամանակ, երկուշաբԹի, Յուլիս 20-ին հերքեց Մամետեարովի յայտարարուԹիւնը. - «Ինչ վերաբերում է այն յայտարարուԹեանը, Թէ քննարկուել է ժամանակացոյցը ինչ-որ տարածաշրջանների վերադարձի եւ այլն, ես ձեզ կարող եմ ասել, որ Մոսկուայի հանդիպմանը այդ հարցը ընդհանրապէս չի քննարկուել»:

Էդուարդ Նալբանդեան նաեւ անդրադարձած է Մատրիտեան նորացուած սկզբունքներուն, ըսելով. - «Հայաստանը իր հաւանուԹիւնը Մատրիտեան փաստաԹղԹին չի տուել եւ այդպիսի յայտարարուԹիւն պաշտօնական մակարդակով երբեւէ չի արել: Մենք ասել ենք, որ Մատրիտեան փաստաԹուղԹը բանակցուԹիւնների հիմք է հանդիսանում. Այդքանը միայն»:

# ՔՈՉԱՐԵԱՆՆ ՈՒ ՕՍԿԱՆԵԱՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԳՆԵՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՌԱՋ

Շարունակուած էջ 1-էն

են եւ հակաարցախեան են: Քոչարեանը եւ Օսկանեանը պէտք է պատասխան տան դրանց համար ԼՂՀ-ի դատարանի առջեւ: Տասնմէկ տարի Հայաստանում ձեւաւորուել են անօրինական իշխանուԹիւններ եւ անմիջապէս լեգիտիմացուել են ԵԱՀԿ-ի եւ Եւրախորհրդի կողմից, որպէսզի Հայաստանում վերջնականօրէն հաստատուի կամակատար, մարիոնետ իշխանուԹիւն: Միայն այս դէպքում է հնարաւոր Հայաստանին պարտադրել Մատրիտեան, կամ նման այլ սկզբունքներ», - յայտարարեց պաշտպանուԹեան նախկին փոխնախարարը:

Ղարաբաղեան հարցի կարգաւորման Թեմայով տեղի ունեցած բանավէճին Հայաստանի պաշտպանուԹեան նախկին փոխնախարար Վահան Շիրխանեան հանդէս եկաւ 8 կէտերէ բաղկացած յայտարարուԹեամբ՝ Հայաստանեան իշխանուԹիւններուն քննադատելով Մատրիտեան սկզբունքներն ընդունելու համար:

Քննարկմանը մասնակցող սոցիոլոգ Լիւդմիլա ՅարուԹիւնեան Շիրխանեանի այս մօտեցումը նկատեց «ծայրայեղ»: «Ես կոնֆլիկտների լուծման մասնագէտ եմ: Գիտէք, նման յայտարարուԹիւնները հասարակուԹիւնում միշտ հնչում են: Ատրպէյճանում նախագահն է ծայրայեղ կարծիքը հնչեցնում, մեզ մօտ՝ ընդդիմուԹիւնը: Շատ տարօրինակ իրավիճակ է ստեղծուել»:

«Ես անձամբ պահանջում եմ, որպէս Հայաստանի քաղաքացի, ձերբազատուել [բանակցուԹիւններում] Ղարաբաղին պատկանող դերից, հասարակուԹեան կարծիքը լսել, եւ մտահոգ լինել ապագայի մասին», - առաջարկեց Լիւդմիլա ՅարուԹիւնեան:

Իր հերԹին Վահան Շիրխանեանը 2 տարբերակ առաջարկեց Սերժ Սարգսեանին. - «ԵԹէ նա ունի ղարաբաղեան հիմնախնդրի լուծման քաղաքական ծրագիր, Թող անցնի այդ ծրագրի իրականացմանը: ԵԹէ նա չունի այդ ծրագիրը, նա պէտք է հեռանայ, ինչպէս հեռացաւ Լեւոն Տէր-Պետրոսեանը»:

## ՀԱՅԱՍՏԱՆ

# Ս.Դ.ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵՑՈՒԱԾՔԸ ՎԵՐՋԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՆ ՇՈՒՐՋ

*Արդի աշխարհաքաղաքական գործընթացները, որոնցում ներգրաւուած են ՀՀ ներկայիս իշխանութիւնները, չափազանց բարդ ու բազմաշերտ են իրենց էութեամբ: Միջազգային բեմահարթակի վրայ գտնուող հիմնական խաղացողներից իւրաքանչիւրը գործելիս, առաջնորդւում է սեփական ազգային եւ պետական շահերով, որոնց ապահովման համար կիրառում է համապատասխան ծրագրեր: Ուսումնասիրել վերոյիշեալ շահերը, վերլուծել նշեալ ծրագրերը՝ ՀՀ ղեկավարութեան կարեւոր պարտականութիւնն է, քանզի քաղաքականութիւնը առաջին հերթին հնարաւոր զարգացումների հաշուարկումն է եւ ըստ այդմ նախապատրաստուելու արուեստ է:*

*Խօսքը մասնաւորապէս վերաբերւում է արցախեան հիմնահարցին եւ հայոց պետականութեանը: Վերջին օրերս հայրենի հանրութիւնը ալեկոծուել է այն լուրերով, որ սոյն թուականի Յուլիսի 17-ին Մոսկուայում Սերժ Սարգսեանը տալու է իր վերջնական համաձայնութիւնը բանաւոր կամ գրաւոր տեսքով ղարաբաղեան հարցի սկզբունքային լուծումների վերաբերեալ:*

*Այդ սկզբունքները դատելիս տեղեկատուական արտահոսքերից, չափազանց անբարենպաստ են հայկական կողմի համար եւ անխուսափելիօրէն բերելու են ազատագրուած տարածքների եւ Արցախի փաստացի կորստի: Աւաղ, բացասական հետեւանքները դրանով իսկ չեն աւարտւում: Արդեօ՞ք հասկանում է Սերժ Սարգսեանը կայանալիք գործարքի գոնէ մօտաւոր հետեւանքները Արցախի եւ Հայաստանի համար:*

*Ստեղծւում է տպաւորութիւն, որ հուժկու միջազգային ճնշումների ներքոյ, զգալով սեփական խոցելութիւնը ոչ լեգիտիմութեան պատճառով, ձգտելով օր աւել պահել իշխանութիւնը, իրեն հռչակած ՀՀ առաջին դէմք, առանց խորանալու առկայ միջազգային իրավիճակի մէջ՝ պատրաստ է գնալու քայլերի, որոնք վերջիվերջոյ կը յանգեցնեն ազգային ու պետական արհաւիրքի:*

*ՍԴՀԿ-ն, ելնելով իր աւելի քան 120-ամեայ քաղաքական փորձից, անհրաժեշտ է համարում իրազեկել հայ ժողովրդին ինչ հայատեաց ծրագրեր գոյութիւն ունեն այսօր եւ ինչ վտանգաւոր մարտահրաւէրներ են նետուած համայն հայութեանը:*

*Թուրքիայի եւ Ատրպէյճանի քաղաքական ղեկավարութեան կողմից առաջ քաշած «Մէկ ազգ՝ երկու պետութիւն» կարգախօսը ամենեւին էլ մակերեսային ու պոպուլիս տական չի: Սա իրականում հին բանթուրքիստական ծրագրի նորացուած ձեւն է: Բանթուրքիզմի՝ թուրքացեղ ժողովուրդների մէկ պետութեան մէջ միաւորելու ծրագրին փոխարինելու եկաւ նէօբանթուրքիզմը՝ նոյն ժողովուրդների պետութիւնների Եւրոմիութեան տիպի կազմաւորման ծրագիրը, Թուրքիայի քաղաքական պատրոնաժի ներքոյ:*

*Իսկ այն թրքացեղ ժողովուրդները, որոնք մինչ այսօր դեռ չեն ձեռք բերել ինքնիշխանութիւն, Թուրքիայի օգնութեամբ սրընթացօրէն սկսել են պայքարել անկախութիւն ձեռք Վերելու ուղղութեամբ, որպէսզի տեսանելի ապագայում համալրեն վերոյիշեալ կազմաւորումը: Այդպիսի նպատակ է հետապնդում, մասնաւորապէս, ույգուրների վերջին ընդվզումները Չինաստանում:*

*Այսպիսով, առաջին հայեացքից կարծես ժամկէտ անց, արդիականութիւնը կորցրած պանթուրքիստական աւանդական ծրագիրը, որի համաձայն թրքացեղ ժողովուրդների միասնական հայրենիքը ընդգրկում է մի հսկայական տարածք (կիսալուսին), ձգուած Պալքաններից մինչեւ Մանջուրիա եւ Չինաստանից մինչեւ Սառուցեալ Ովկիանոս, այսօր ստանում է նոր ոգի ու շունչ՝ կերպարանափոխուելով «Մէկ ցեղ՝ տարբեր պետութիւններ» կարգախօսի ներքոյ: Եւ եթէ աւանդական պանթուրքիզմը նախատեսում էր խոչընդոտ հանդիսացող հայերի համար արիւնալի ցեղասպանութիւն, ապա արդիականացուած նէօբանթուրքիզմը նախատեսում է հայերի համար այս անգամ սպիտակ անարիւն եղեռն՝ տնտեսական, մշակութային, քաղաքակրթական, ժողովրդագրական անհաբեկչութեան միջոցով: Թուրքիային պանթուրքիստական կամար ստեղծելու ճանապարհին այդքան խանգարող հայկական սեպը Ղարաբաղի յանձնումով անհետ կորելու է հսկայական նոր պանթուրքիստական պարկի յատակին, ինչը չափազանց վտանգաւոր է ոչ միայն Հայաստանի, այլեւ Իրանի (Ատրպատականի հատուած), Վրաստանի (Աջարիա, Ջաւախք) համար: Եւ մեր երկրի բոլոր միջազգային շփումները արտաքին աշխարհի հետ եւ այդ թւում հնարաւոր մուտքը Եւրոպա, իրականացուելու է այդ պարկի միանձնեայ տիրոջ՝ Թուրքիայի միջոցով, ինչին աշխարհաքաղաքական խոշոր խաղացողները ելնելով Հայաստանի այսօրուայ քաղաքական ղեկավարութեան անճարակութիւնից ու թուլութիւնից, դէմ չեն:*

*Այսպիսի անմխիթար ճակատագիր է սպասւում Հայաստանին ու Արցախին, եթէ Մոսկուայում Սերժ Սարգսեանը ստորագրի նախատեսուող համաձայնութիւնը, իսկ քիչանց էլ Անկարայում վաւերացնի նախապայմաններով լի չարաբաստիկ հայ եւ թուրքական հաշտեցման ճանապարհային քարտէզը:*

*Ելնելով վերոշարադրուած նկատառումներից, քաջ գիտակցելով պահի ողջ օրհասականութիւնը, ՍԴՀԿ-ն կոչ է անում ողջ հայ ժողովրդին, ներառեալ արցախահայութիւնն ու Սփիւռքը, պահանջել Սերժ Սարգսեանի անյապաղ հրաժարականը: ՍԴՀԿ-ն միաժամանակ զգուշացնում է, որ ներկայ յանցաւոր ռեժիմը տեսնելով, որ իշխանութիւնը նոյն ձեւով պահել հնարաւոր չէ, կը փորձի շուտափոյթ ստեղծել նոր կեղծ ընդդիմութիւն, որը «հայրենասիրական» դրօշի ներքոյ կ'աշխատի փոխարինել ձախողուած պետական ջոջերին, դրանով իսկ ապահովուելով վերջիններիս վերարտադրութիւնը իշխանական ղեկի մօտ:*

*Հայրենակիցներ, վերջին մէկուկէս տարուայ ընթացքում ՀԱԿ-ը բազմիցս զգուշացրել էր, որ ոչ լեգիտիմ նախագահը խոցելի է եւ բնականաբար խամաճիկ է դառնում մեծ տէրութիւնների ձեռքին: Ցաւօք ամէն ինչ ունի իր գինը եւ այդ գինը վճարելու պահն է եկել. այն է՝ Հայաստանի եւ Արցախի անկախութիւնը: Այս օրհասական պահին կայ միայն մէկ լուծում՝ պահանջել ոչ լեգիտիմ նախագահի հրաժարականը, քանզի միայն ազգովի ընտրուած նախագահն է ի վիճակի լուծելու Հայաստանի եւ Արցախի ապագայի խնդիրը:*

***ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ***

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

*«Հայ Քաղաքացիական Հասարակութիւն» Մարդու Իրաւունքների Պաշտպանութեան Ընկերակցութեան կողմից իրականացուած ուսումնա-սիրութիւնները ցոյց են տալիս, որ ՀՀ իշխանութիւնները, ի հակառակ ՀՀ օրէնսդրութեան եւ ԵԽԽՎ 1677 բանաձեւի պահանջների, շարունակում են քաղաքական հետապնդումները ընդդիմադիր քաղաքական հայեացքներ ունեցող եւ ընդդիմադիր գործունէութեամբ զբաղուող ՀՀ քաղաքացիների նկատմամբ:*

*Ի ապացոյց վերոնշուած հիմնաւորման ընկերակցութիւնը ի ցոյց է դնում՝*

**Ա.** *ՀՀ դատարանների կողմից ոչ օբյեկտիւ ու լրիւ դատաքննութեամբ կայացուած, անարդարադատ դատավճիռները, որոնց արդիւնքում դատապարտուել են ընդդիմադիր քաղաքական համոզմունքներ ունեցող անմեղ քաղաքացիներ եւ պարտակուել յանցագործութեան կատարման համար պատասխանատու պաշտօնեաներ եւ այլ անձինք,*

**Բ.** *Իրաւապահ մարմինների աշխատակիցների կողմից իրականացուած արարքները, որոնցում ակնյայտ են յանցաւոր արարքների հանցանշանները,*

**Գ.** *Մէկ տասնեակից աւելի քաղաքական նկատառումներով դատապարտուած անձանց համաներման միջոցառման մեջ, անհիմն հիմնաւորումներով, չներգրաւելը՝ նրանց նկատմամբ չհիմնաւորուած պատժի իրականացումը շարունակելը,*

**Դ.** *Հետախուզման մեջ գտնուող անձանց կամաւոր ներկայանալու պարագայում նրանց նկատմամբ կալանքը, որպես պատիժ, այլ ոչ թէ խափանման միջոց կիրառելը:*

*«Հայ Քաղաքացիական Հասարակութիւն» Մարդու Իրաւունքների Պաշտպանութեան Ընկերակցութիւնը նշում է, որ Հայաստանեան իշխանութիւնները իրենց քայլերով բացայայտ անյարգալից վերաբերմունք են ցուցաբերում ժողովրդավարական արժէքների եւ միջազգային իրաւունքի նկատմամբ, նրանց գործողութիւններն ուղղուած են ոչ միայն ՀՀ քաղաքացիների այլեւ առաջադէմ ողջ հասարակութեան դէմ:*

*«Հայ Քաղաքացիական Հասարակութիւն» Մարդու Իրաւունքների Պաշտպանութեան Ընկերակցութիւնը պահանջում է Հայաստանեան իշխանութիւններից անյապաղ ազատ արձակել բոլոր քաղաքական բանտարկեալներին եւ դադարեցնել ցանկացած տեսակի քաղաքական հետապնդումները Հայաստանի տարածքում եւ նրանից դուրս:*

*«Հայ Քաղաքացիական Հասարակութիւն» Մարդու Իրաւունքների Պաշտպանութեան Ընկերակցութիւնը միաժամանակ իր վրդովմունքն է ներկայացնում ժողովրդավարական բոլոր պետութիւնների իշխանութ-իւնների եւ միջազգային կառոյցների, այս խնդրում, կրաւորական եւ երկակի վերաբերմունքի վերաբերեալ:*

**«Հայ Քաղաքացիական Հասարակութիւն»**
**Մարդու Իրաւունքների Պաշտպանութեան Ընկերակցութիւն**
**ք. Լոս Անջելես, 19 Յուլիսի 2009թ.**

ՏԵՍԷ՛Ք՝ ԵԹԷ BANKRUPTCY-Ի ՕՐԷՆՔՆԵՐԸ Կ'ՕԳՆԵՆ ՁԵԶԻ, ԶԱՆԳԱՀԱՐԷՔ

JANSEZIAN LAW FIRM, PC

If you're facing overwhelming debts, bankruptcy laws may eliminate all your debts permanently!

225 South Lake Avenue, Third Floor, Pasadena, California 91101

Call Now for a FREE Consultation: 626-432-7209


Nazareth V. Jansezian, Esq.

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

# ԹՈՒՐՔ ՄՏԱՒՈՐԱԿԱՆ ՄԸ 20-ՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

*Այն օրը, երբ գրելու նստեցայ, նայեցայ օրացոյցին, Օգոստոս 15: Ճօգկիւրի համալսարանի ուսումնասիրող Ալի Սայիտ Չէթինօղլուին կողմէ 15 Յուլիսին ղրկուած Պայազիտ հրապարակին վրայ կախուած Փարամազի եւ անոր 19 հայ սոցիալիստ ընկերներուն մասին նշմար մը ստացած եմ: Հարկաւ, հոն կը նշուի նաեւ 15-16 Յունիսին իմ ապրած փորձութիւնս. երկու թուականներուն զուգադիպութիւնը հետաքրքրական է...:*

*1915 թուականին հայ սոցիալիստներուն մահուան վճիռը կը գործադրուի: Անկէ ճիշդ 55 տարի ետք, Սթամպուլի աշխատաւորութիւնը ոտքի կ'ելլէ: Փաստօրէն, քաղաքը երկու օր իրողապէս աշխատաւորութեան ձեռքը կ'անցնի: Ինքնաբուխ, իսկական աշխատաւորական ընդվզում մը... Փոթենցիալ կոմունա մը Սթամպուլի մէջ՝ եթէ այդ քիչ մըն ալ շարունակելու հնարաւորութիւնը ըլլար...:*

*Յունիս 15-16-ի դէպքերուն մասին գրելը ձգենք եւ վերադառնանք մեր Փարամազին: Փարամազ ծածկանունով, Մատթէոս իսկական անունով հայ ֆետային ազատամարտիկ եւ քաղաքական գործիչ մըն էր: Ան ծնած է 1863-ին, Մեղրի քաղաքը: Կրթութիւնը կը ստանայ Էջմիածնի մէջ: Նախիջեւանի մէջ ուսուցչութիւն կատարած ժամանակ կը ծանօթանայ Ստեփան Սապահ Գիւլեանին (1915-ին, վերջինս եւս, ի բացակայութեան մահուան կը դատապարտուի պատերազմական դատարանին կողմէ) եւ կը մտնէ հայկական Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան մէջ: 1903-ին Կովկասի ցարական փոխարքայ Գոլիցինի դէմ մահափորձ մը կը կազմակերպէ: 1905-1906 հայ-ազերի բախումներուն ժամանակ, երկու ժողովուրդներուն մօտ միասնաբար ապրելու ջանքեր կը գործադրէ: 1908-ի յեղաշրջումէն ետք, նոր ծնող թրքական սոցիալիստական շարժման նման հնչակեանները եւս, ի տարբերութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Իթթիհատ Վէ Թերաքքիի մենատիրութեան դէմ կը դիրքորոշուին եւ կը գործակցին ընդդիմութեան հետ:*

*1913-ին Բ. դուռը գրաւելու փորձին հանդէպ եղած կառավարութեան հակադարձութենէն յետոյ, օսմանեան ընդդիմութիւնը Իթթիհատ Վէ Թերաքքըի մենատիրութեան դէմ պայքարելու որոշումը կ'առնէ: Այս ընդդիմութեան առաջնորդներէն մէկն էր Փարիզ աքսորուած քիւրտ Շերիֆ փաշան: Իսկ բանակին մէջ, շարժման կը յարէր 1912 թուականին ալպանացիներու յեղափոխութեան ժամանակ լեռ բարձրացած Փրկարար Սպաներու խումբը, որոնց տրուած խոստումները չէին յարգուած:*

*Ազատական եւ ինքնավարութեան կողմնակից ընդդիմադիր ղեկավար՝ իշխան Սապահէտտինի Փարիզ աքսորուած մէջոցին, իթթիհատական խունթան ընդդիմադիր մտաւորականներու դէմ ձերբակալութիւններ կը նախաձեռնէ: Անոնց մէջ ապագայ TKP-ի (Թուրքիոյ Համայնավար Կուսակցութիւն) հիմնադիր Մուսթաֆա Սուպհին ալ կար: Մուսթաֆա Սուպհին կը յաջողի Սինոպի բանտէն փախչիլ Ռուսիա:*

*Հնչակեանները, որոնք կապուած կը մնային օսմանեան ընդդիմադիրներուն, 1913-ին, Ռումանիոյ իրենց համագումարին կ'որոշեն «պատժել» 1909-ի Ատանայի ջարդերը գործադրած իթթիհատական խունթան: Լրտես մը այս ծրագիրը տեղեակ կը պահէ խունթային: Քիւրտ Շերիֆ փաշային կատարած բացայայտումները Փարիզէն Իթթիհատի ղեկավարները խուճապի կը մատնեն: Պատերազմը չպայթած Փարամազ եւ իր ընկերները կը ձերբակալուին: Սկիզբը, ոչ ոք մահավճիռ կ'ակնկալէր: Որովհետեւ, գործողութիւնը սկիզբէն բացայայտուած ըլլալով, այն միայն իր կազմակերպչական հանգրուանին մէջ կը գտնուէր:*

*Ապրիլ 24-ին, մտաւորականներու հաւաքական ձերբակալութենէն որոշ ժամանակ անց, Փարամազին եւ իր ընկերներուն դէմ մահավճիռ կ'արձակուի եւ այդ կը գործադրուի Յունիս 15-ին:*

*Այդ պահուն, ցեղասպանութեան վերածուող բռնագաղթը արդէն սկսած էր: Եթէ ծրագիրը յաջողութեամբ պսակուէր, խունթան օսմանեան պետութիւնը պատերազմին մէջ ներհրելու արկածախնդրութեան առիթը չէր ունենար եւ այդ ձեւով միլիոնաւոր քաղաքային եւ զինուորական մարդոց կեանքը կը խնայուէր:*

*Իսթամպուլի պորտին վրայ կանգնեցուած մահասիւները, իրենց պատճառած սարսափով, երկար ատեն բոլորին ալ փոքր ընդդիմութիւն մը գոյացնելու հնարաւորութենէն զրկեցին: Մահապարտներուն դիակները Իսթամպուլի պատերէն դուրս տեղ մը թաղուեցան: Զրոյցի մը համաձայն, հետագային, անոնք իրենց հաւաքական գերեզմանափոսէն հանուած եւ գաղտնօրէն ու անշշուկ թաղուած են 1908-ի յեղաշրջման նահատակներուն յուշակոթողին կից:*

*Ստորեւ մահուան դատապարտուածներուն անուանացանկը.*

*Փարամազ, Տոքթ. Պէննէ (Պետրոս Թորոսեան), Արամ Աչըքպաշեան (Գրիգոր Կարապետեան), Գեղամ Վանիկեան (Վանիկ), երիտասարդական «Կայծ» թերթին խմբագիրը, Մուրատ Զաքարեան (Մշեցի), Երուանդ Թոփուզեան, Յակոբ Պասմաճեան, Սմբատ Քելեշեան, Ռուբէն Կարապետեան, Արմենակ Համբարձումեան, Աբրահամ Մուրատեան, Հրանդ Եկաւեան, Գառնիկ Պոյաճեան, Յովհաննէս Ղազարեան, Մկրտիչ Երէցեան, Երեմիա Մանուկեան, Թովմաս Թովմասեան, Գարեգին Պօղոսեան, Մինաս Քէշիշեան եւ Պօղոս Պօղոսեան:*

*Անոնց յիշատակին առջեւ յարգանքով կը խոնարհինք:*

*Վերոյիշեալ անունները առնուած են Թէոդիկի (Թէոտորոս Լափճինեան) «Հայ Կղերականներու Գողգոթան» գիրքէն, Հ. Մատթէոսեան, Իսթամպուլ, 1921, էջ 15:*

*ՌԵՃԻՊ ԶԱՐԱՔՕԼՈՒ*
*«Հայթերթ» կայքէջ 16/6/2009*

# ԹՈՒՐՔԻԱ՝ ԱՅՍՕՐ

*Վերջին հինգ-վեց տարիներու ընթացին Թուրքիոյ մէջ նշմարելի փոփոխութիւններ կը պատահին:*

*Փոփոխութիւնները կը պատահին թոյլտուութեամբ կառավարութեան եւ ի նպաստ իշխող կուսակցութեան հեղինակութեան ամրապնդման:*

*Իսլամական խոր կապեր ունեցող իշխող կուսակցութիւնը, երկիրը իր մենատիրութեան տակ առնելու եւ զայն իսլամական հասկացողութեամբ կառավարելու ձգտումով, թոյլատրած է որոշ «թապու»-ներու կործանումը: Թապուներ, որոնք ուղղակի կապակցութիւն ունին «քեմալական վարչակարգ»-ին հետ, որ ստեղծած էր անցեալի ճշմարտութիւնները քօղարկող իրավիճակ մը՝ խեղաթիւրեալ պատմութեան մը հրատարակումով: Քեմալի կատարած տառերու յեղաշրջումով, փոխան դարերէ ի վեր գործածուող արաբական տառերու, լատինական տառերու գործածութեամբ նոր սերունդը խզուեցաւ իր անցեալէն եւ կուրօրէն ընդունեց «մեծ առաջնորդ»-ին ներկայացուցած «ճշմարտութիւնները»:*

*Մուսթաֆա Քեմալ նախ տապալեց սուլթանութիւնը՝ վերջին սուլթանը դաւաճան հռչակելով, ապա, հանրապետութեան հիմնումէն յետոյ, յարմար առիթով մըն ալ՝ խալիֆայութիւնը, ինչ որ դարերով նոյնացած էր սուլթանութեան հետ: Այսպէսով վերջ տուաւ տիրող իսլամական վարչակարգին եւ երկիրը վերածեց լայիք հանրապետութեան:*

*Իր հիմնած կուսակցութիւնը՝* Cumhuriyet Halk Partisi (CHP) *երկիրը կառավարեց ֆաշիստական հասկացողութեամբ ժողովուրդը զրկուած էր արտայայտուելու ազատութենէն:*

*Փոքրամասնութիւնները եղան ամենամեծ տուժողները: Քսան դասակարգի զինուորագրում՝ մահուան տարուող մարդիկ: Ունեւորութեան տուրք՝ հարստութեան յափշտակում:*

*Երկիրը իր պատեանին մէջ քաշուած էր: Արար աշխարհ կը նկատուէր Թուրքին թշնամին: Այդ մտածելակերպը, հոգեբանական վիճակը տակաւին չէ փոխուած: Չէ փոխուած, որովհետեւ հարցեր յարուցանողն ինքն է եւ շատ հեռու է Վարի դրացիական յարաբերութիւններ մշակելու հասկացողութենէն:*

*Այսօրուայ իշխող կուսակցութիւնը Եւրոմիութեան անդամակցելու բուռն փափաքը ունի՝ ի նպաստ ի'ր իսկ գոյատեւման: Սակայն Եւրոմիութեան անդամակցելու համար անհրաժեշտ է շարք մը օրէնքներու բարեփոխումը:*

*Սահմանադրութեան վերատեսութիւն: Առ ի հետեւանք այդ վերատեսութեան, կառավարութեան գլխուն վրայ դամոկլեան սուր ճօճող բանակը պիտի կորսնցնէ իր քաղաքական ուժը, որուն շատ ալ համակարծիք չէ բանակի վերին հրամանատարութիւնը:*

*Խօսքի ազատութեան հաստատում: Կառավարութիւնը որոշ չափով համամիտ է այս ազատութեան, եթէ ան նպաստաւոր է հին կարգավիճակին ստեղծած թապուներուն փլուզման եւ այդ վարչակարգին ժողովուրդի առջեւ նսեմացման, բայց ոչ արիւնի վրայ հաստատուած հանրապետութեան հիմքերուն խախտման:*

*Լոզանի դաշնագրով փոքրամասնութիւններուն տրուած եւ հետագային զանազան ճնշումներով անոնց ձեռքէն խլուած իրաւունքներու վերահաստատում: Կառավարութիւնը, փոխանակ այդ նացիական օրէնքներու հիմնական փոփոխութեան, կը նախընտրէ փոքրամասնութեան հաստատութիւններու եւրոպական ատեաններ դիմումը եւ իւրաքանչիւր հարցով իրենց իրաւունքներուն հոն վերահաստատումը:*

*Յառաջադէմ մտաւորականներ՝ թիւով սահմանափակ, որոնք ընդհանրապէս իրենց բարձրագոյն կրթութիւնը Եւրոպայի կամ ԱՄՆ-ի մէջ ստացած են ու պետական պաշտօնեայ չեն, երկրին մէջ ժողովրդավարական կարգերու հաստատման ջատագովներն են: Ժողովրդավարական կարգերու հաստատման համար ալ հարկ է թապուներու մեծագոյնին՝ Հայոց Հարցին՝ Ցեղասպանութեան եւ Հայաստանի հետ միակողմանիօրէն փակուած սահմանի բացման կարգաւորումը: Անոնք, իրենց գրիչները սրած, որոշ թերթերու մէջ սիւնակներ կը լեցնեն:*

*Մինչ այդ վարչապետը ցեղասպանութիւն կը կոչէ Պաղեստինի մէջ իր մի քանի հազար կրօնակցին ջարդը, ինչպէս նաեւ Աւիոյ խորքերը մեռցուած իր 50 ազգակցին սպանդը, ուրանալով-ուրանալ իրենց գործած ցեղասպանութիւնները՝ մէկ ու կէս միլիոն հայուն եւ ցարդ շարունակուող քիւրտերու ջարդը:*

*Թուրքիոյ մէջ, ցարդ, հիմնական որեւէ փոփոխութիւն չէ եղած: Չէ եղած, որովհետեւ հիմնական փոփոխութիւն կատարելու նպատակ չկայ: Կատարուած փոփոխութիւնները մակերեսային են ու խաբուսիկ: Մարդոց մտածելակերպը օրէնքներու բարեփոխութեամբ կարելի չէ փոխել, այլ՝ ուսուցման դրութեան փոփոխութեամբ:*

*Եթէ Թուրքիոյ մէջ որեւէ փոփոխութիւն եղած ըլլար, նախ Հրանդ Տինք չէր սպաննուէր, ապա դատավարութիւնը այսքան չէր ձգձգուէր եւ դատավարութեան ընթացքին այսքան իրաւաբանական խախտումներ չէին պատահեր:*

*Համաձայն կարգ մը միամիտ շրջանակներու, բարեփոխութիւններու համար եղած արտաքին ճնշումները երկրին մէջ դրական արձագանգ չեն ունենար: Ինչ որ աչքէ կը վրիպի, առանց արտաքին ճնշման ոչ մէկ ատեն այդ երկրին մէջ բարելաւումներ եղած են, եթէ անշուշտ այդ բարելաւումները ի նպաստ էին իշխող կուսակցութեան շահերուն: Ինչ որ աչքէ կը վրիպի, ներկայ կացութեան փոփոխութեան հակառակորդներուն նման շշուկներու տարածման համար տարած ծածուկ աշխատանքն է:*

*Եթէ Թուրքիա օրէնքներով եւ մտայնութեամբ կատարելապէս եւրոպական մակարդակի չհասնի, պէտք չէ թոյլատրուի որ ան Եւրոմիութեան իրաւական անդամ դառնայ: Անգամ մը որ իրաւական անդամ դառնայ, երկրին մէջ բարեփոխութիւնները կանգ պիտի առնեն: Փոխանակ Թուրքիա եւրոպական մակարդակի բարձրանալու, ան ամէն ջանք ի գործ պիտի դնէ որպէսզի իր բարքերը Եւրոպայի մէջ ալ տարածուին:*

*Իրենց երկիրներուն մէջ դժգոհութեան առարկայ միլիոնաւոր թուրք գտնուող Ֆրանսայի Նախագահն ու Գերմանիոյ վարչապետը այս հեռատեսութեամբ կը հակառակին Թուրքիոյ լիիրաւ անդամակցութեան:*

*«ԼՈՒՍԱԲԱՑ»*

**ՄԱՍԻՍ**
**ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ**

## ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

# ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՆՏԻ 152-ՐԴ ԹՌԻՉՔԸ $4.7 ՄԻԼԻՈՆԻ ՆՊԱՍՏ ՈՒՂԱՐԿԵՑ ՀԱՅԱՍՏԱՆ

*Միացեալ Հայկական Ֆոնտի 152րդ թռիչքը Երեւան հասաւ Յուլիս 11ին, փոխադրելով $4.7 միլիոն արժողութեամբ մարդասիրական օգնութիւն:*

*Այս թռիչքով, Միացեալ Հայկական Ֆոնտը իր կողմէ տրամադրեց $3.8 միլիոն արժողութեամբ դեղորայք եւ բժշկական պիտոյքներ, որ նուիրած էր AmeriCares կազմակերպութիւնը (2.3 միլիոն արժողութեամբ), Direct Relief International կազմակերպութիւնը ($876,000), Քանատայէն՝ Health Partners International կազմակերպութիւնը ($402,000), եւ Կաթողիկէ Բժշկական Առաքելութեան Վարչութիւնը ($226,000):*

*Հետեւեալ կազմակերպութիւններն ու անհատները եւս ապրանքներ նուիրելով մասնակցեցան այս թռիչքին - Անգլիայէն՝ Birthlink կազմակերպութիւնը ($322,000), Հայաստանի Ակնաբուժական Ծրագիրը ($112,000), Բժ. Յակոբ Յովակիմեան ($64,000), Բժ. Սթիվըն Քաշեան ($47,000), Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութիւնը ($41,000), Hologic ընկերութիւնը ($32,000), եւ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը ($30,000):*

*Թռիչքին մասնակցեցան նաեւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը (18,000), Հաուըրտ Գարակէօզեանի Յիշատակի Ընկերութիւնը ($15,000), UCLA Medical Center ($15,000), Ամերիկահայ Մշակութային Ընկերակցութիւնը ($14,000), Հայ Մշակութային Հիմնարկութիւնը ($13,000), Հայ Որբերու Օգնութեան Միութիւնը ($13,000), Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Մօտ Հայկական Առաքելութիւնը ($11,000), եւ Բժ. Ալպերթ Ֆիլիփս ($10,000):*

*1989էն ի վեր, Միացեալ Հայկական Ֆոնտը 152 թռիչքներով եւ 1,699 ծովային արկղներով $564 միլիոն արժողութեամբ մարդասիրական նպաստ ուղարկած է Հայաստան:*

*Միացեալ Հայկական Ֆոնտը համատեղ աշխատանքն է Ամերիկայի Հայկական Համագումարին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան, Հայ Օգնութեան Միութեան, Հայաստանեայց Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Առաջնորդարանին, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Ամերիկայի Առաջնորդարանին, եւ Լինսի Հիմնարկին:*

*Յաւելեալ տեղեկութեան համար, կը խնդրուի դիմել Միացեալ Հայկական Ֆոնտի գրասենեակին՝ 1101 North Pacific Avenue, Suite 204, Glendale, CA 91202 կամ հեռաձայնել (818) 241-8900 թիւին:*

# ՈՍԿՐԱԾՈՒԾԻ ՆՈՒԻՐԱՏՈՒՆԵՐ ԱՊԱՀՈՎՈՂ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ՁԵՌՆԱՐԿ



*Երեւանի մէջ Stem Cell Harvesting Center-ի բացման տօնախմբութեան նուիրուած ձեռնարկը տեղի ունեցաւ Կիրակի, Յուլիս 12ին, երեկոյեան ժամը 6:00ին, Կլէնտէյլի Հիլթըն Պանդոկին մէջ: Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայացուց Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան, որ ճաշկերոյթէն առաջ սեղաններուն օրհնութիւնը կատարեց: Գործածուեցաւ վայելուչ յայտագիր մը:*

*Բացման խօսքը կատարեցին Իրաւաբանուհի Լարա Երէցեան եւ Սէմ Թրիփոլի: Բարի գալստեան խօսքով հանդէս եկաւ Նազ Աթիքեան: Յատուկ պատուի (testimonials) արժանացան Ալիք Թօփալեան եւ Ռիչըրտ Պոյաճեան: Տեսաերիզով ցուցադրուեցաւ "A journey to Save a Life", ապա "Be an Angel Save a Life" Նեքտար Գալաճեանի եւ Գարլօ Մանճիկեանի կողմէ: Իրենց սրտի խօսքը ուղղեցին Իրաւաբան Մարք Կիրակոս, որ օրուան հանդիսավարն էր, Տոքթ. Ֆրիտա Ճօրտըն՝ Նախագահը Armenian Bone Marrow Donor Registry-ի եւ Սեւակ Աւագեան՝ Վարիչ Տնօրէնը Երեւանի մասնաճիւղի: Ապա կատարուեցաւ մրցանակներու բաշխումը:*

# ՅՈՒՇԱՀԱՆԴԷՍ՝ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԳԵՐՇՆ. ՆԵՐՍԷՍ ԱՐՔ. ՊՈԶԱՊԱԼԵԱՆԻՆ



*Լոս Անճելըսի համայն հասարակութեան կը հաղորդենք, որ Ուրբաթ, Օգոստոս 7, 2009ին, երեկոյեան ժամը 7:30ին, Արեւմտեան Թեմի Առաջնորդարանի մեծ սրահին մէջ (Պըրպէնք), տեղի պիտի ունենայ յատուկ Յուշահանդէս մը, նուիրուած վերջերս Երեւանի մէջ վախճանած Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ վաստակաշատ ու պատուական եկեղեցականներէն՝ Գերշն. Ներսէս Արք. Պոզապալեանին:*

*Երեկոյթը, որ պիտի ունենայ պատշաճ յայտագիր, կազմակերպուած է Պէյլանի Հայրենակցական Միութեան կողմէ եւ հովանաւորուած է Հայց. Առաքելական եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Առաջնորդութեան կողմէ, յանձին Թեմի Սրբազան Առաջնորդ՝ Յովնան Արք. Տէրտէրեանին:*

*Վաստակաշատ Հայ բարձրաստիճան եկեղեցականին նուիրուած Յուշահանդէսը յատուկ առիթ մըն է յարգելու անոր յիշատակը:*

*Մեր սպասումն է, որ մեր ժողովուրդի զաւակները իրենց ներկայութեամբ մասնակից ըլլան Պոզապալեան Սրբազանին նուիրուած այս Յուշահանդէսին:*

**ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ**


ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Avenue
Pasadena, CA 91107

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով: Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA

ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

Authorized Agent
Blue Shield of California
An Independent Member of the Blue Shield Association
A.B.A. INSURANCE SERVICES

SERVING SINCE 1975
BEDROS S. MARONIAN



(818) 500-9585
CA LIC. #0494056 • BMaronian@AOL.com
FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205
ԵՐԲԵՔ ՈՒՇ ՉԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

## ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

1980ին Սարաֆեան իր ընտանիքին հետ կը տեղափոխուի Միացեալ Նահանգներու Տիթրոյթ քաղաքը եւ իբր փոխ նախագահ կ'աշխատի աշխարհահռչակ ճարտարապետ Մինօրօր Փամազաքիի ընկերութիւնը: Իր այդ պաշտօնով Սարաֆեան մինչեւ 1994 թուական կը նախագծէ ու կը վերահսկէ տարբեր բնոյթի ճարտարապետական ծրագրեր ու շինութիւններ Թուրքիոյ, Սէուտական Արաբիոյ, Սպանիոյ, Ճափոնի, Քանատայի եւ այլ վայրերու մէջ: 1994էն ետք ան կը զբաղի



ճարտարապետական խորհրդատուութեամբ Միացեալն Նահանգներու մէջ:

Հայաստանի անկախութենէն ետք Յ. Սարաֆեան յաճախ կ'այցելէ հայրենիք կամաւոր իր օժանդակութիւնները մատուցելով ճարտարապետական մարզէն ներս: Այս կամաւոր ծառայութիւնը սկիզբ կ'առնէ երբ անգուգական բարերար Ալեք Մանուկեան կը խնդրէ իրմէ երթալ ու իբր խորհրդատու իր նպաստը բերել Երեւանի մայր տաճար Ս. Գրիգոր Լուսաւորիչի շինարարութեան, որուն գլխաւոր ճարտարապետն էր Ստեփան Քիւրքճեանը: Սարաֆեան այս միջոցով կը ծանօթանայ նաեւ Հայաստանին յատուկ ճարտարապետական իւրայատկութիւններուն:

Ներկայիս Յ. Սարաֆեան իր բոլոր ժամանակը կը տրամադրէ Հայրենիքի բարեկարգման խնդիրներուն: Անոր գործունէութիւնը ունի երկու ուղղութիւն.

- Օժանդակել կրթական, մշակութային, բարեսիրական ու առողջապահական հաստատութիւններու, յատուկ ծրագիրներու համար գտնելով ու տրամադրելով նիւթական օժանդակութիւն:
- Օգնել Հայաստանի ճարտարապետներուն իրենց մասնագիտութեան մէջ յառաջդիմելու, կիսելով իր գիտելիքներն ու փորձառութիւնը անոնց հետ:

Առաջին ծրագրով Սարաֆեան օգնած է ֆինանսաւորելու Երեւանի Պետական Համալսարանի կարգ մը շէնքերու վերանորոգումներն ու նոր մասնաշէնքի մը կառուցումը: Այս ծիրէն ներս իրագործած է ծրագրեր գործակցութեամբ Հայաստանի Ամերիկեան համալսարանին: Միջազգային զանազան հիմնարկներէ նիւթական նպաստներ ձեռք ձգած է Հայաստանի գիւղական կարգ մը շրջաններու դպրոցներուն, մշակութային կեդրոններուն եւ ջրային մատակարարման ծրագիրներուն՝ գործակցութեամբ Հայաստանի Ընկերային Ներդրումներու Հիմնադրամին: Միջոցներ ապահոված է Արագած լերան վրայ գտնուող արեւային ճառագայթներու հետազօտական հիմնարկի մշակութային կեդրոնին, ինչպէս նաեւ համալսարանական կրթանպաստներու համար: Գիտական թէ մասնագիտական գիրքերու հրատարակման նպատակով Սարաֆեան ջանք չէ խնայած գտնելու անհատ նուիրատուներ:

Յ. Սարաֆեանի երկրորդ նպատակն է Հայաստանի ճարտարապետական դպրոցի մակարդակը հասցնել միջազգային չափանիշներուն: Իր փափաքներէն մէկն է հիմնել ճարտարապետական մասնագիտական գրադարան մը, ուր ճարտարապետներ կարենան գալ ու ծանօթանալ մասնագիտական արտասահմանեան թէ հայաստանեան գրականութեան:

Յովսէփ Սարաֆեան գործօն անդամ է զանազան կազմակերպութիւններու ինչպէս՝ Ճարտարապետներու Միջազգային Միութեան, Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի Հոգաբարձութեան, Երեւանի Պետական համալսարանի Բարեկամներու Միութեան, Հ.Բ.Ը.Մ.ին որպէս պատուոյ անդամ, Միշիկընի Հ.Բ.Ը.Մ.ի Ալեք եւ Մարի Մանուկեան վարժարանի հոգաբարձութեան, Ամերիկայի Հայ Ճարտարապետներու Ընկերակցութեան, Վարդանանց Ասպետներու, Ամերիկայի Հայկական Համագումարին, Պոլսահայ Մշակութային Միութեան, եւ Տիթրոյթի Ափոթօլիքը Ընկերակցութեան:

Merrill Lynch
INVESTMENT BANKING
JACK KALANJIAN
Professional Financial Advisor
Corporate Center Pasadena
225 So. Lake Avenue
Pasadena, CA 91101
(626) 396-2825 Direct
(626) 376-4665 Fax
jack_kalanjian@ml.com
"Helping the Armenian Community Build Wealth"

## ՊԱՏՄՈՒԱԾՔ

# ՎԱՐԴԱՎԱՌ...

*ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ*

*Ծաղկանց լեռները իրենց սիրտն էին բացել, աղբիւրներ էին պայթել, որոնց ակներից յորդառատ ձիւնոտ ջուր էր ժայթքում լոյսին: Ջրերը գրկել էին իրար, վազել էին դէպի հայոց բնաշխարհի դաշտեր, արմէնների Արածանին էր այն: Հոսում էր այն հայոց բնօրրանի շատ հեռուներ, լեռներն էին պատռել իրենց իրանները որ այն գնար Մշոյ դաշտին, Ալաշկերտի հանդերին իր պաղ համբոյրը ցօղելու, գնար Բալու ու Խարբերդ քաղաքները ողջունելու, դրախտի գետ՝ Եփրատին համբուրելով իր ջրերը գնային հարաւի դաշտերը ողողէին, Շամիրամի կախովի պարտէզները բարձրանային: Արածանիին էին ողջունել հայոց լեռների ձնահալ գետակները՝ Բագրեւանդ, Խնուս, Բիւրակն, Մանազկերտ, Մեղրագետ: Հայերը հազարամեակներ նրա ափերին պաշտամունք էին նուիրել եւ սրբազան Արածանի էին կոչել այն: Նրա ակունքների մօտ էր եղել հայոց զօրքի գլխաւոր բ բանակատեղին՝ Շահապիւանը: Այնտեղ էին գումարուել աշխարհաժողովները, այնտեղ էին տօնախմբել հայոց Նաւասարդը եւ վառուող վարդերի տօնը՝ Վարդավառը: Հարաւի ժողովուրդները իրենց լեռնաշխարհի Արատտա երկրից հարաւ գնացած հայն, որոնց հիմա Շումերներ են կոչում, Բաբելոնացիք Արածանիի հովիտը դրախտի երկիր էին կոչել: Այստեղ, եւ ոչ թէ երկնքում էր արարուած եղել դրախտը, այստեղ էին Ադամն ու Եւան դրախտի սքանչանքը վայելել, ճողփել Արածանիի ջրերը եւ նրա փրփուրներից հագուստ կապել:*

*Տրդատ Գ. Թագաւորն հայոց, Տիգրանի հայու այրուձին, սպառազէն զօրքը, ժողովուրդը Արածանիի ջրերի պաղ սարսուռով էին մկրտուել: Արածանիի ափին, Երուանդունիների Արտաշէսեան տոհմի պատերազմի արեւային արքան՝ Տիգրան Բ. չթողնելով Հռովմէացի զօրավար Լուկուլլոսը պղծէր Արածանիի ջրերը, հայկական այրուձիի գունդերով, իր աներ Միհրդատ Պոնտացիի հետ, նրա ափերին ճակատամարտ էին մղել, ջախջախել զօրքը եւ այդ պարտութեան համար Հռովմի ծերակոյտը շնորհազրկել էր նրան:*

*Արմէնները ջրի, ծաղկի պաշտամունքի իրենց Վարդավառը տօնախմբում էին Արածանիի ակունքների մօտ: Հայ, եթէ քու հոգում վառւում է քու ցեղի սրտի ոգին, երեւակայութեան տեսիլքով թուիր քու իմաստնացած նախնիների երկիր, գնա Ծաղկանց լեռների սրտից պայթած պաղ ջրեր, քու նախնիների հետ Վարդավառը տօնախմբիր: Մտիր Արածանիի ջրեր, թող հայոց դրախտիկ աշխարհի սարսուռը հոսի քու սրտում: Գնա խոնարհիր քու թագաւորին, ափերով ջուր ցանիր նրա թագին, ծիրանի պարեգօտին: Հեթանոսացիր, ամաններով Արածանիի ջուր թափիր պարմանուհիների իրաններին, նրանց վարսերից, լուսնաթոյր մարմիններից հոսած անուշ ջուրը ըմպիր: Գնա ծաղկանց լեռների լանջերին վարդածաղիկներ քաղիր, ցօղիր այն Արածանիի ջրերով, պսակներ հիւսիր, գրկիր պարմանուհիներին, այն կապիր նրանց ճակատներին եւ տես հեթանոսական վայելքից ինչպէս պիտի պայթի քու հոգին:*

*Արցախի քաջամարտի ժամանակ, մի ատրպէյճանցի լրագրող, հայու զէնքի շաչիւնից սարսափած, «յորդորել» էր հայերին գնա իրենց մկրտուած Արածանիի հովիտ: Առանց իր խորհուրդի էլ հայ դեռ պիտի վերադառնայ իր Արածանիի բնաշխարհ, իսկ իրենց նուաճած Աղուանների ու Մարաստան աշխարհների նախնիների ժառանգների սրտերում իրենց երկրի կարօտի կրակը պիտի վառուի, նրանց պիտի վռնտեն իրենց տափաստաններ:*

*Վարդավառեան տօնախմբութիւնը, վառուող վարդերի, ծաղկի ու Նար-Ծովինար աստուածուհու ջրի պաշտամունքի տօնահանդէսը, հայերի հրավառ սիրոյ գեղեցկութեան աստուածուհի՝ Աստղիկին էր նուիրուած եղել: Բնապաշտ հեթանոս հայերը աստղերի լոյս ժպիտը, ծիածանի գեղեցկութիւնն էին ցօղել նրա դէմքին: Հայոց քարացած ոգեղէն սրտի Արարատի լանջերին ժայթքած ձնծաղիկի կապոյտ, դեղին, սպիտակ բոցերից չէ՞ր յառնել արդեօք Աստղիկը: Հեթանոս հայերը, բնութեան երեւոյթներին, նրա կատարելիութեանը գեղեցիկին, պաշտամունք էին նուիրել: Եւ Աստղիկը աստուածացրին, նրա համար Տարօն գաւառի Աշտիշատ աւանում Վահէ Վահեան մեհեան պատեցին: Արեգակունք ակներով բոցեղէն Վահագնը այցի էր եկել Աստղիկին, տիեզերական խրախճանքով էին արբեցել եւ արեւային սիրով բոցավառել սրտերն իրենց: Հայերն հաւատացել էին, որ նրանց սիրոյ խրախճանքի հրավառութիւնից անձրեւ էր տեղացել իրենց աշխարհին, բերք ու բարիքով ծովացնելով հանդերն իրենց: Հեթանոս հայերը Վարդավառեան հրաշունչ տօնախմբութիւններին, իրենց պարտէզների կարմիր վառուող վարդեր, իրենց լեռների լանջերի բոսոր ծաղիկներ, նրանց գագաթներին ժայթքած բրաբիոն ծաղիկներ, անտառների կանաչ ճիւղեր էին մատուցել նրա մեհեանին: Հապա՞ Նաւասարդեան խաղերին, յաղթանակի պսակները ճակատներին դիւցազուններ, իրենց յաղթ բազուկներով գրկել էին պարմանուհիներին, տարել Աստղիկի մեհեան՝ նրա սիրով մկրտուելու:*

*Հայ պատմիչները իրենց մատեաններում բազում հրաշապատումներ էին վկայել Աստղիկ դիցուհու ու նրան նուիրուած Վարդավառի մասին: Իսկ, եթէ «Պարթեւ»ը այրած չլինէր հայոց հին աստուածների մեհեանների մեհենագրերը, մեր սրտերը ինչքան պիտի սարսռային քերթող քուրմերի յօրինած՝ լոյսի, ծաղիկի ու գեղեցկութեան հրայրքից:*

*Այսպէս, հայերի Նաւասարդեան խաղերին ու Վարդավառին մասնակցել էին նաեւ հայոց հին աստուածները, որ ուժ, իմաստութիւն յորդէին տօնախմբութիւններին: Նաւասարդեան խաղերի աւարտից յետոյ, Արածանիի ափերի վարդաստանների վրայով ճախրելու ատեն, Աստղիկի ոտքը փուշին է հպել, նրա արեւային կրակ արիւնն է հոսել սպիտակ վարդերի վրայ եւ այդ օրուանից, վարդերը կարմիրով էին ցօղուել: Աստղիկի գեղեցկութեամբ, նրա սիրոյ բոյրով ժպտացող վարդ, թագուհին ծաղիկների, որի վրայ բազմած սոխակները Աստղիկի գեղեցկութեան համանուագն են հնչում:*

*Աստղիկն իրիկնադէմերին, Տարօն աշխարհի Գրգուռ լերան ձիւնահալ ջրերի գետակի փրփուրներում լոգանք էր ընդունել: Նրա մարմնի լոյս գեղեցկութեամբ սքանչանալու համար, պարմանները մօտակայ բլուրների վրայ խարոյկներ էին վառել: Աստղիկը իմանալով այդ, գետահովիտը մշուշով էր պատել, որ նրանց գրկի իր մարմնի հրաշունչ գեղեցկութեան հմայքով արբենալու: Այդ վայրը Մշուշ են կոչել, հետագայում հնչիւնափոխուելով կոչուել է Մուշ, Մշոյ Դաշտ, Մշոյ աղջիկ, Մշոյ Առաքելով Վանք, Մշոյ Սուլթան Սուրբ Կարապետ վանք, սասնայ լեռների դիւցազնածին մշեցիներ:*

*Մուշ, Աստուածաշնչական Արարատեան թագաւորութեան Մուսասիր-Արդուինի քաղաքն է այն, որտեղ եղել է Հայկ Գերագոյն Փառաց տաճարը՝ հոյակապ Մուսասիրի Տաճարը, սիւնազարդ, կամարակապ տաճարը: Սարգոն ասորեստանցին փլել էր այն, գերել Խալտի-Հայ աստուծոյ ոսկեձոյլ արձանը, եւ նրա նմանակը իր ձեռքին պահած՝ յաւերժացրել աղիւսէ սալիկի վրայ: Մուսասիրը վկայ, աշխարհում կառուցեցին ու դեռ կառուցում են իր նման սիւնազարդ տաճարներ՝ փառք պարգեւելով նրա յաւերժութեանը:*

*Աստղիկը իր երկնային տաճարի ծաղկաստանների աստղերի կրակ շաղով վարդաթերթեր է սփռել հայոց աշխարհի վրայ, որոնք թաքուն հպելով հայոց հարսերին, իրենց ցեղին ընծայել են Աստղիկի գեղեցկութեան հմայքով յորդած դուստրեր, ահա թէ ինչու են աղջիկները հայոց այսքան սիրուն:*

*Վարդերով վառուող, վարդերով զարդարուած հայոց Վարդավառեան տօներ: Այնտեղ պաշտամունք էին նուիրել պտղաբերութեանը, արգասաւորութեանը, ջրին, այն ցանել էին իրենց մարմիններին, որ նրա սարսուռը իրենց հոգիներին կեանքի շողեր վառէր: վարդեր, ծաղիկներ էին նուիրել իրարու, որ բնութեան սքանչանքով հրավառուէին: Աղաւնիներ էին նետել երկինք, որ նրանց օդային պարի ճախրանքի հմայքով արբենային: Տօնախմբութիւնները կատարել էին ջրերի ակունքների մօտ, սարերի լանջերի ծաղկունքի ծովակներում, աղերս էին յղել աստուածների երկինքը ամպերով քօղելու, անձրեւ տեղալու, որ իրենց արտերը ծփային ցորեանի ծովերով, ծառերը մայրանային ծիածան գօտիներ կապած: Խնճոյքներ էին հրավառել, որ նրանց բոցերը բերկրանքի կրակ վառէին իրենց հոգիներում: Վարդավառին կատարում էին բերքահաւաքին նուիրուած առաջին տօները, իրենց աստուածների բագինների առաջ ցորեանի խուրձեր, զամբիւղներով նորահաս մրգեր, ոսկէ ծիրան էին փռել:*

*Աստղիկ դիցուհուն էր նուիրուած եղել Հայկեան Տոմարի բոլոր ամիսների եօթներորդ օրը: Հայերի եօթ թիւը սիրոյ ուխտ կապելու պայմանաթիւ էր եղել, որը կարող էր պատահել եօթը օր, եօթը ամիս կամ եօթը տարի...:*

*Նենգ Շապուհ, իր դաւադիր Անակի վրիժառութեան համար, արշաւել էր անթագաւոր Հայաստան, հրամայել էր ոչնչացնել Խոսրովի տոհմը: Մի պալատական փրկել էր թագաւորի մանչեր Տրդատին ու տոհմը: Մի պալատական փրկել էր թագաւորի մանչեր՝ Տրդատին ու Խոսրովիդուխտին, տարել նրանց Կեսարիա ու ապա Արեւելեան Հռովմէական կայսրութեան Նիկոմիդիա քաղաք: Տրդատը այնտեղ ուսանել էր Հելլէներէն ու փիլիսոփայութիւն: Առնական Տրդատը ծառայել էր Հռովմէական բանակում, Լիկիանոս զօրավարի հսկողութեամբ, հմտացել էր մարտեր վարելու գործին ու իր քաջագործութիւններով Հերակլէսի համբաւին արժանացել: Հռովմի կայսր Աւրելիանոսը, իմանալով Տրդատի քաջութեան մասին, բանակ էր տրամադրել նրան՝ Հայաստան արշաւելու, հայոց գահին տիրանալու համար: Տրդատն էր թագաւորում հայոց աշխարհում: Տարբեր մշակոյթներով ու կրօններով դրացի երկու հզօր կայսրութիւններ մրցակցում էին իրենց ազդեցութեան ոլորտներում ընդգրկել Հայաստանը:*

*Նազովրեցի Յիսուսի աշակերտները՝ Առաքեալները, արեւելք ու արեւմուտք էին գնացել իրենց Վարդապետի հաւատքի լոյսը սփռելու: Հռովմում հալածուած երեսուն երկու կոյսեր եկել էին հայոց աշխարհ ու սկսել գաղտնի Քրիստոնէութիւն քարոզել: Պալատ էին բերել կոյսերին, անվրդով կանգնել էին թագաւորի առաջ: Նրանցից Հռիփսիմէն, կարծես Արարատի ձիւնոտ ծաղիկների Աստղիկը լինէր: Կարծես ատրուշանում վառուող կրակ էր նա, դէմքից Աստղիկի տիեզերական գեղեցկութեան լոյսը սիրոյ ջահեր էր վառել իր հոգում: Հեթանոսական սիրոյ տենչանք էր պոռթկացել Տրդատի սրտում, հրամայել էր ամուսնանալ իր հետ: Կոյսը մերժել էր հեթանոսի հետ ամուսնանալ, տանջել էին, սակայն անյողդողդ ու անվրդով մերժել էր, հմայել էր սպաննել նրան ու միւս կոյսերին: Խռովել էր թագաւորի հոգին, ինչպէս մի վտիտ էակ կարող էր այդ հաւատքի համար մեռնել: Սպաննուած սիրոյ տուայտանքը խաթարել էր հոգին, զղջացել էր...: Իր իմաստութիւնը ճանաչել էր նոր վարդապետութեան խօսքը: Պետութեան անկախութիւնը, ինքնուրոյնութիւնը պահպանելու նպատակով, Տրդատը հրամայել էր արտօնել Հայաստան աշխարհու քարոզել Քրիստոնէութեան ուսմունքը ու Գրիգորին ազատել կալանքից: Ագաթանգեղոսի պատումը՝ հայոց դիւցազուն թագաւորի հիւանդութեան ու Գրիգորի աղօթքներով բուժուելու մասին, երբեք ճշմարիտ էր կարող լինել, իրականութեան հանդէպ պատմիչի մեղանչում է այն:*

*Եւ Գրիգորը, բագրեւանդում, Բագարանում, Աշտիշատում ու այլուր քանդեց հայոց հին աստուածների մեհեանները եւ նրանք, արեւի շողերին բազմած՝ գնացին Վահագն Յարթագողի ճանապարհի իրենց արեւային տաճարներ: Հայոց աշխարհում մարեց նրանց տիեզերական ուժի, կենսուժի զօրութեան հրայրքը: Քանդուած մեհեանների վրայ, նրանց ընկած որմերի լացող քարերով, նոր հաւատքի տաճարներ պատեց՝ Էջմիածին, Առաքելոց, Մշոյ Կարապետ, Վարագայ: Հայոց հին պաշ-*

*Շար.ը էջ 17*

## ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԾՆՆԴԱՎԱՅՐՆ Է ՀՈԳԻՈՅՍ

***ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ***

*Որքան խոր իմաստ եւ խորհուրդ ունի անմահ բանաստեղծ Վահան Թէքէեանի վերոյիշեալ խօսքը: Որովհետեւ, ճշմարտապէս, ամէն հայու հոգւոյն ծննդավայրն է հայ եկեղեցին որովհետեւ հո՛ն է որ կոփուած ու մկրտուած ենք իբրեւ հայ քրիստոնեայ:*

*Հայ եւ քրիստոնեայ:*

*Հայութիւնը մեր անբաժան մասն է, մեր էութիւնը, մեր մարմինն ու հոգին: Մինչ քրիստոնէութիւնը զգեստ մըն է, խնկաբոյր պատմուճան մը, որով զգեստաւորուած ենք մեր ծնունդէն յետոյ, ցմահ կրելու համար զայն: Երախան կարծիք չունի իր քրիստոնեայ մկրտութեան մէջ եւ ոչ ալ յետոյ, գիտակից տարիքին անոր կարծիքը հարցուած է այդ մասին: Ամէն հայու համար պարտադիր աւանդութիւն մըն է, որ կը շարունակուի 301 թուականէն ի վեր:*

*Գեղեցիկ աւանդութիւն՝ որ մեզի կարելիութիւն կու տայ Քրիստոսի եւ Աստուծոյ հետ հաղորդուելու եւ այդ նպատակով է որ հիմնուեր է եկեղեցին իբրեւ յատուկ ժամադրավայր՝ Աստուծոյ եւ Քրիստոսի հետ հաղորդուելու: Ուրեմն, եկեղեցին քարի ու շաղախի կառոյց մը չէ պարզապէս, այլ սրբավայր մը՝ ուր հաւատացեալներ իրենց մեղքերը կը քաւեն եւ մաքրուած հոգիով դուրս կու գան աւելի անմեղ եւ առաքինի կեանք ապրելու մաղթանքով:*

*Հայու հոգիով աւլցուն եւ աստուածային ներկայութեամբ օրհնուած եկեղեցի կոչուած այդ կառոյցները պահպանելու եւ իրենցմէ ակնկալուած դերը կատարելու համար պէտք ունին խնամակալներու, որոնք եկեղեցականներն են՝ Աստուծոյ պաշտօնեաներ: Բայց եկեղեցիին դերը կրօնական առաքելութեամբ միայն չի վերջանար: Խօսքը, ի հարկէ, հայ եկեղեցիին մասին է, որ կրօնականին զուգահեռ եւ նոյնիսկ աւելի գերիվեր պարտականութիւն մը ունի՝ հայու հոգիի պաշտպանութիւն, ազգապահպանում: Ամէն շաբաթավերջին Կիրակի եւ նաեւ տօնական օրերուն մեր եկեղեցականութիւնը իրմէ ակնկալուած պարտականութիւնը մասամբ կը կատարէ կրօնական արարողութիւններով: Մասամբ ըսինք, որովհետեւ եկեղեցականութեան դերը չի վերջանար աղօթքով միայն: Կան նաեւ հիմնական, նոյնիսկ նախամեծար այլ պարտականութիւններ՝ ազգի ու հայրենիքի պաշտպանութիւն: Արդարեւ, երբ հայրենիքը յարձակման ենթարկուած է, համայն կղերականութիւնը սուրն ի ձեռին պատերազմի ելած է թշնամւոյն դէմ, Աւարայրի հերոսամարտէն մինչեւ մեր օրերու Սարդարապատի հերոսամարտը: Լեզուի, արուեստներու եւ առհասարակ, մշակոյթի պաշտպանութիւնն ու զարգացումը կղերականութեան աւագ պարտականութիւնը եղած: Ատոր համար է որ Վռամշապուհ Արքան եւ Սահակ Պարթեւ Կաթողիկոսը Մեսրոպ Մաշտոց վարդապետը առաքելութեան մղեցին հայ լեզուն սեփական տառերով օժտելու: Մաշտոց հիանալիօրէն իրագործեց իր առաքելութիւնը եւ այդ տառերով կատարուեցաւ Աստուածաշունչի թարգմանութիւնը, որ կոչուեցաւ մայր թարգմանութեանց, սկիզբը դնելով հայ գրաւոր մշակոյթի Ոսկեդարին:*

*Անցնելով ներկային, պարտաւորիչ չէ որ այսօրուան մեր կղերականներն ալ ըլլան Ղեւոնդ Երէցներ, Կորիւն ու Ղազար Փարպեցի, կամ մշակոյթի այլ անուանի գործիչներ, սակայն կ՛ակնկալուի որ նուազագոյնը ըլլան մշակոյթի, հայ բառ ու բանի պաշտպաններ:*

*Այդ օրերուն կղերականութիւնը կոչում եւ ապրում էր՝ քրիստոսավայել պարզ, ժուժկալ, ցնցոտիով զգեստաւորուած ճգնաւորի կեանք: Այսօր, փառք Աստուծոյ, կոչումին զուգահեռ, նիւթական առումով շլացուցիչ ասպարէզ է նաեւ, որ արժանաւորին հետ, երբեմն, կը հրապուրէ նաեւ անարժանը, պատեհապաշտը: Հայ ժողովուրդը առատաձեռն կերպով կը վճարէ եկեղեցիին, այն համոզումով որ հայ եկեղեցին հիմնական սիւներէն մէկն է ազգապահպանման պայքարին: Բացի ժողովուրդի լումայէն, շատ մեծահարուստներ եւ կտակարարներ, հաւատք ունենալով եկեղեցականութեան վրայ, պատկառելի գումարներով կ՛ապահովեն եկեղեցւոյ նիւթական բարօրութիւնը, որպէսզի եկեղեցին իր կարգին կարենայ կատարել իրմէ ակնկալուած ազգային պարտականութիւնները:*

*Ազգապահպանումի աշխատանքը կը կայանայ ոչ միայն եկեղեցիներու կառուցումով եւ եկեղեցական արարողութիւններ կատարելով, այլ մանաւանդ օժանդակելով ազգապահպանումի աշխատանքներուն մասնակից բոլոր հաստատութիւններուն, դպրոցներուն, հրատարակչական տուներուն, մամուլին եւ գրողներուն նիւթական ապահովութեան:*

*Եկեղեցւոյ նիւթական բարօրութիւնն ու պայծառութիւնը ինքնանպատակ եւ բաւարար չեն: Անոնք պայմանաւորուած են հայ մշակոյթի գոյատեւումին ու զարգացման ծառայող հաստատութիւններու եւ անհատներու հանդէպ ցուցաբերուած բարոյական ու նիւթական գնահատանքով:*

### ՅՈՒՇԵՐ

## «ՄԱՅՐ ԱՐԱՔՍԻ ԱՓԵՐԻՆ...»

***ՄԵՍՐՈՊ ԲԱԼԱՅԵԱՆ***

*1931 թուականն էր: Յունիսեան տաք օրեր: Թաւրիզաբնակ «մեծ հօրս» Յովհաննէս Բալայեանի հրաւէրով մեր ընտանիքը՝ մայրս, ես եւ իմ երկու փոքր եղբայրներս Ներսէսը եւ Յովհաննէս պիտի թողնէինք հայրենի հողը, Արաքսի վրայով երկաթուղով անցնէինք Իրան-Թաւրիզ, որտեղ բնակւում էր արդէն իմ հայրը: Իսկ թէ ինչու «մեծ հայրս»ը ես առայ չակերտների մէջ: Իմ մեծ հայրերը եւ մեծ մայրերը 1915 թուականից առաջ եւ յետոյ, Վասպուրականի գաղթի ճանապարհին զոհուել էին ծերութեան եւ համաճարակի պատճառով: Հօրս հայրը Տ. Մեսրոպ քահանան Վանի Թիմար գաւառի Գոմս գիւղի հոգեւոր հովիւն էր, իսկ մօրս հայրը Յովհաննէս Խլոյեանը այդ նոյն գիւղի ռէսի պարտականութիւններն էր կատարում: Թաւրիզաբնակ ազնիւ եւ տիպար մի մարդ, որն կոչւում էր Յովհաննէս Բալայեան, սիրով յանձն է առնում զոհուած Յովհաննէս Խլոյեանի բեռն իր ուսերին առնել, իրեն դուստր ընդունելով մօրս Աղաւնուն եւ մեզ որպէս իր թոռները:*

*Յետագայ տարիներին երբ հաստատուեցինք Իրան, Յովհաննէս Բալայեանը սիրով ընդունուեց մեր կողմից որպէս մեծ հայր, իսկ նրա զաւակները՝ Խաչիկը եւ Աշխէնը մեզ համար դարձան իրապէս մօրեղբայր եւ մօրաքոյր:*

*Այդ ջերմ եւ հարազատ փոխադարձ սէրը շարունակուեց մինչեւ վերջ, մինչեւ նրանց կեանքի աւարտը: Անշուշտ Հայաստանից մեր ընտանիքի փոխադրման հարցում, բացի Յովհաննէս Բալայեանի միջնորդութիւնից, մեծ դեր ունեցան Ատրպատականի ժողովրդանուէր Առաջնորդ երջանկայիշատակ Տ. Ներսէս Արք. Մելիք Թանգեանը եւ Իրանի Խորհրդարանի հայ պատգամաւոր Ջօրա Սագինեանը:*

*Ինչեւէ, 1931 թուի Յունիսի 14-ին, մայրս մեզ առած իր հետ, հասանք Սովետական Ջուլֆա, որն կից էր Արաքսին, իսկ միւս կողմում իրանական Ջուլֆան էր: Մայրս իր հետ վերցրել էր մեր ընտանեկան իրերի մի մասը, դրանց թւում մեր հագուստները, իր փրոֆիլէ մահճակալը, հագուստեղէնի պահարանը (Գամոդ) պղնձէ ինքնաեռը, պղնձէ մեծ կաթսան եւ այլ իրեր: Մենք 2 օր պիտի մնայինք Սովետական Ջուլֆայում, մեզ յատկացուած մի սենեակի մէջ: Ցերեկը ազատ էինք: Խաղում էինք մեր սենեակին մօտիկ տարածքում: Յանկարծ իմ ուշադրութիւնը գրաւեց Արաքս գետը որն շատ մօտ էր եւ որի ջրի սահանքը հրապուրեց ինձ: Իմ մանկական հետաքրքրութիւնը մղեց ինձ մօտենալ եւ ձեռքերս մտցնել ջրի մէջ: Անշուշտ այդ բոլորը կատարուեց մօրս աչքերից հեռու առանց նրա նկատման: Հենց այդ պահին երբ միամտօրէն հրճուանքով ձեռքերով խաղում էի մայր Արաքսի ջրերի հետ, ռուս սահմանապահ զինուորը նկատելով այդ, ինձ անհասկնալի լեզուով մի քանի բառեր նետեց ու հրացանի փողն ուղղեց դէպ ինձ եւ հենց ուզում էր հրազէնի բլթակը սեղմել, մէկ ակնթարթում մայրս հասաւ ու ինձ ետ քաշեց ջրից եւ իր գիրկն առաւ...*

*Դառնալով ռուս սահմանապահին, մայրս բողոքեց ասելով. ինչո՞ւ էիր ուզում կրակ բացել միամիտ երեխայի վրայ, նա միայն մօտեցել էր գետին ու խաղում էր ջրի հետ: Սահմանապահը պատասխանեց մեզ կարգադրուած է հրացանազարկ անել այն բոլորին, որոնք անօրինական կերպով կը մօտենան սահմանագծին, դրանք լինեն մեծ կամ անչափահաս, տարբերութիւն չկայ: Այդպիսով մայրս իր ճարպիկութեամբ եւ ճկունութեամբ փրկեց իմ կեանքը մայր Արաքսի ափերին...:*




WAHIB'S MIDDLE EAST RESTAURANT

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԱՄԵՆԱՀԱՄԵՂ ՃԱՇԱՏԵՍԱԿՆԵՐ:
ՈՒՆԻ ՆԵՐՔԻՆ ԵՒ ԲԱՑՕԴԵԱՅ ՆՍՏԵԼՈՒ ԲԱԺԻՆՆԵՐ
Բաց է Շաբաթը 7 օր: Ունի յատուկ սրահ հաւաքոյթներու

(626) 281-1006
(626) 576-1048
910 E. Main Str. - ALHAMBRA, CA

# ԱՅՑ ՐԱՖՖՈՒ ՇԱՌԱՒԻՂԻ ՄՆԱՑՈՐԴԱՑ (ՀԱՐՑԱԶՐՈՅՑ)

*Հարցազրոյցը վարեց՝*
***ՑՈՎԻԿ ԷԴԳԱՐԵԱՆ***

*Վիպասան Րաֆֆու ընտանիքից, իր կնոջ Աննայի եւ երկու տղաներ՝ Արամի եւ Արշակի դիակներն զմռսած, դագաղի մէջ, մնում են Լոնդոնի «Քէնզըլ Գրին» գերեզմանատան մատուռի ներքեւում (Քէնզըլ Րայզ Սէմէթրի), որոնց մասին ինձ յայտնեց Լոնտոնահայ ազգային-եկեղեցական գործիչ, Պրն. Ցակոբ Փալամուդեանը, որ իմ մէջ հետաքրքրութիւն ստեղծեց գնալ ու տեսնել:*

*Ու յիշեցի, որ 1978 թուին, Լոնտոնի «Հայ Երաժշտական Փառատօն»ի օրերից, ծանօթ եմ Ռաֆֆու հարս՝ Տիկին Ալեքսանդրային, որ անգլուհի լինելով հանդերձ, հրաշալի արեւելահայերէն է խօսում շնորհիւ Իրանում ծնուած լինելուն եւ իր հօր հայասէր լինելուն:*

*Զանգում եմ Տիկ. Ռաֆֆուն, որը այդպէս էլ գրում է: Ինքն է վերցնում ընկալուչը, բարեւում եմ, յայտնում ցանկութիւն իր հետ գնալու այցի այդ պատկառելի ընտանիքի անդամների դագաղներին: Նա սիրով ընդունում ու խոստանում է կապուել այդ գերեզմանատան պատասխանատու մարդկանց հետ, որ ժամադրուելով՝ երթանք:*

*Երեք օրից Տիկին Ալեքսանդրան զանգում է ինձ ու ճշդում յաջորդ օրուայ համար ճաշից յետոյ ժամը 2-ի ժամադրութիւն, եւ որոշում ենք երկու ժամ առաջ իր մօտ լինել:*

*Յաջորդ օրը, բարեբախտաբար զանգում է երգիչ-նկարիչ Խաչիկ Փիլիկեանը ու ցանկութիւն է յայտնում մեզ հետ գնալու, ու ինքն էլ լաւագոյնս ծանօթ լինելով Տիկին Ռաֆֆուն, որին «Ռաֆֆի մամա» է կոչում, ու նախօրօք էլ նրան խոստացել էր, որ նկարի իր ամուսնու, Արշակի պատկերը, որ պատրաստ է եւ այդ առիթով էլ ցանկանում է այդ նկարը նուիրել Տիկ. Ալեքսանդրային: Համաձայնում եմ, ու նա գալիս է:*

*Ճանապարհւում ենք գտնում Տիկ. Ռաֆֆու բնակարանը, որ Լոնտոնի կենտրոնական թաղամաս «Քուինզ Ուէյ» Փօրչէսթըր Գարդընզ փողոցի համար 13-ումն է: Դրան զանգի վրայ գարմանքով դիտում ենք «Ռաֆֆի» մակագրութիւնը, որ աւելի համարձակութիւն է ներշնչում ինձ ու հպարտութիւն: Զանգում եմ, ինքը Տիկին Ալեքսանդրան է գալիս, դուռը բացում է ժպտալով ու մեզ ներս ընդունում սիրալիր: Նա մենակ է, իր տնում ոչ ոք չունի, ոչ էլ զաւակ, որ այսուհետ պահի Ռաֆֆի անունը, բայց հոգեպէս առոյգ է ու շատ գոհ իր վիճակից ու իր երեք յարկանի կոկիկ բնակարանից:*

*Տիկ. Ռաֆֆին, նախ կնոջս է հրաւիրում որ սուրճ պատրաստի, ու անմիջապէս բերում է մի շարք նկարներ, Աննա, Արշակ ու Արամից, որոնցից քանիսը նուիրում է ինձ:*

*Սուրճը խմելուց յետոյ, սկսում եմ հարցազրոյցը:*

*Հարցում. Ինչպէ՞ս է, որ դուք լաւ հայերէն էք խօսում:*

*Պատասխան. Հայրս հայերին ու Հայոց լեզուն սիրում էր ու մեզ մանկութիւնից ստիպում էր, որ հայերէն սովորէինք ու խօսէինք:*

*Հ. Ո՞վ է ձեր հայրը:*

*Պ. Հայրս անգլիացի բժիշկ էր, որ իր հօր եւ պապի հետ նոյն մասնագիտութիւնն ունէին ու նախքան, Թեհրանում անգլիական դեսպանատուն բացուէր, եղել էին Թաւրիզում, որպէս այնտեղի անգլիական դեսպանատան բժիշկ:*

*Հ. Ո՞ր թուից էին ձեր պապերը հաստատուել Իրանում:*

*Պ. 1849 թուից:*

*Հ. Ի՞նչ էր ձեր հօր անունը:*

*Պ. Բժիշկ Ճորճ Քորմիկ:*

*Հ. Ե՞րբ են ամուսնացել ձեր ծնողները:*

*Պ. 1900 թուին:*

*Հ. Ինչպէ՞ս փոխադրուեցիք Թեհրան:*

*Պ. Ես մօրս կողմից հայ եմ: Մայրս եղել է Ենակոլոպեան ընտանիքից, որը Վարդան Մամիկոնեանի սերունդից է: Բժշկի կարիք ունենալով, 1919 թուին հօրս փոխադրեցին Սուլթանաբադ (այժմ Արաք): Ցուրտ էր, մենք չորս քոյր ու ծնողներս կարաւանով էինք գնում: Հայրս հիւնդացաւ ցրտից ու սրտի տագնապ ունեցաւ, հինգ ամսից՝ մահացաւ ու ըստ իր ցանկութեան թաղուեց որպէս հայ, Արաքի Հայոց եկեղեցում, որի քանդուելուց յետոյ, Ամերխանեան անունով մէկը նրա գերեզմանը փոխադրում է Արաքի հայոց գերեզմանատունը: Հօրս մահից յետոյ մենք վերադարձանք Թեհրան ու մինչեւ 1923 թիւը այնտեղում մնալով՝ փոխադրուեցինք Անգլիա:*

*Հ. Ինչպէ՞ս ծանօթացք Արշակ Ռաֆֆի հետ եւ ի՞նչ հանգամանքով:*

*Պ. 1925 թուին, ես սովորում էի մի գիշերօթիկ դպրոցում Լոնտոնում: Մի օր ինձ տուն կանչեցին, տեսայ Արշակին, որ եկել էր մօրս այցի Գուսան վարդապետի հետ: Այնտեղ ինձ ծանօթացրին Արշակի հետ: Այդ օրը Սեպտեմբեր մէկն էր ու Սեպտեմբեր 3ին Արշակը գնացել էր մօրս մօտ առաջարկութիւն արել: Եկան դպրոց, ինձ յայտնեցին ու Սեպտեմբեր 5ին նշանուեցինք: Ամուսնացանք 1926 թուին:*

*Հ. Ինչպէ՞ս էր, որ Ռաֆֆիենց ընտանիքը եկել էր Լոնտոն:*

*Պ. Մեծ Ռաֆֆին մահացել էր 1888 թուին: 1900 թուից առաջ իր մեծ տղան, Արամը որ Արեւելեան լեզուների մասնագէտ էր, ու լաւ պարսկերէն գիտէր, վարձւում է Լոնտոնի Արեւելեան Եւրոպայի լեզուների դպրոցում որպէս ուսուցիչ ու իր մօր հետ փոխադրւում է Լոնտոն, իսկ իր փոքր եղբայրը, Արշակը, այդ տարիներում, որպէս ռուսաց լեզուի դասատու՝ վարձւում է Լոնտոնում:*

*Հ. Լսել եմ, որ նա Հայաստանի Հանրապետութեան օրօք, Անգլիայի դեսպան էր կարգուել:*

*Պ. Այո, նա 1914-18 թուերին Քինգզ Քոլէճում ռուսերէն լեզուի դասատու է եղել: 1919-ին նշանակուել է Հայաստանի դեսպան, որից յետոյ, Միսաքեան անունով մէկը, շարունակել է իր գործը:*

*Հ. Ի՞նչ աշխատանք է կատարել հայութեան համար:*

*Պ. Հայ գաղթականների համար, Նանսէնեան փասփորթներ է*

*Շար.ը էջ 19*

## ԷՆՏՈՆԻ ԿՐԱՖՏ-ԲՈՆԱՐ-140
## (1869-1945)



*Կրաֆտ-Բոնարը ծնուել է 1869 թ. Յունիսի 15ին Շուեյցարիայի Վօ Նահանգի Էկլ քաղաքում, դեղագործի ընտանիքում: 1888 թ. Լոզանում ստացել է «դպրութեան պսակաւորի» աստիճան, որից յետոյ մինչեւ 1893 թ. Լոզանում, Պեռլինում, ապա եւ փարիզում, ստացել է աստուածաբանական կրթութիւն: 1893-1919 թթ. ընթացքում որպէս հոգեւոր առաջնորդ գործել է Շուեցարիայի տարբեր բնակավայրերում, ապա, թողնելով հոգեւոր գործունէութիւնը, ամբողջապէս նուիրուել է Հայկական հարցին ու հայութեան բազմաթիւ խնդիրների լուծմանը:*

*Ամուսնացել է 1894 թ., ունեցել չորս զաւակ՝ երեք դուստր եւ մէկ որդի, որոնք իրենց հօր օրինակով եռանդուն ու համոզուած հայասէրներ են եղել:*

*Հայասիրական իր գործունէութիւնը Կրաֆտ-Բոնարը սկսել է դեռեւս 1896 թ.ից, երբ համիդեան կոտորածների սարսափելի հետեւանքների մասին բանախօսութեամբ հանդէս եկաւ Շուէյցարիայի Բենիեն գիւղում, ուր նա հոգեւոր հովիւ էր: Ազդուած Բոնարի ցնցող կոչից՝ մի քանի շուեյցարական ընտանիքներ ջարդերի արդիւնքում որբացած հայ մանուկներ որդեգրելու ցանկութիւն յայտնեցին:*

*Շուտով Բոնարի նախաձեռնութեամբ Բենիեն գիւղում հիմնադրուեց մի հաստատութիւն՝ «Հայ Տունը» անուամբ, որը կոչուած էր ապաստան տալու ու խնամելու Շուեցարիա գաղթած հարիւրաւոր հայերի: Համագործակցելով Շուէյցարիայում հայանպաստ գործի հիմնադիր Ժորժ Կոտէյի հետ՝ Կրաֆտ-Բոնարը ակտիւ կերպով ներգրաւուել է «Հայ որբերի գաղթի եւ խնամակալութեան շուէյցարական հասարակութիւն» կազմակերպութեան աշխատանքներին՝ 1896ից դառնալով այդ հաստատութեան նախագահը: 1898-1922 թթ. ընթացքում շուէյցարական որբանոցներում ապաստանել են շուրջ 2000 որբացած հայ մանուկներ:*

*Բացի որբախնամ գործունէութիւնից մեծ մարդասէրը ակտիւօրէն կազմակերպել ու իրագործել է արեւմտահայութեան վիճակը բարելաւող մի շարք աշխատանքներ: 1896 թ. Բոնարի անմիջական նախաձեռնութեամբ Լոզանում գումարուել է Շուեյցարիայի կանտոնների (նահանգների) ներկայացուցիչների ժողով, ուր որոշում է կայացուել Օսմանեան կայսրութեան հայ բնակչութեանն անհրաժեշտ օգնութիւն ցոյց տալու վերաբերեալ: Միեւնոյն ժամանակահատուածում Կրաֆտ-Բոնարի ակտիւ ջանքերի շնորհիւ ստեղծուել է «Հայերի օգնութեան շուէյցարական կազմակերպութիւնը», որն իր գործունէութիւնը շարունակել է ընդհուպ մինչեւ 1922 թ.:*

*Լինելով «Հայաստանի բարեկամների շուէյցարական կոմիտէների միութեան» գլխաւոր քարտուղար՝ Կրաֆտ-Բոնարը բազմիցս դիմել է մեծ տէրութիւնների ղեկավարներին՝ օսմանահպատակ հայերի ճակատագրի մտահոգութեամբ: 1919 թ. Հոկտեմբերի 31ին Բոնարը հեռագրել է ԱՄՆի նախագահ Վ. Վիլսոնին՝ խնդրելով «իր պաշտպանութեան տակ առնել նահատակուող ժողովրդին»: 1920 թ.ից եղել է «Հայասէրների միջազգային լիգայի գործադիր կոմիտէի» անդամ, բազմիցս դիմել է Ազգերի լիգային՝ հայկական հարցի պաշտպանութեամբ հանդէս գալու խնդրանքով: Մեծ հայասէրը հեղինակել է նաեւ Հայկական Հարցին նուիրուած մի շարք աշխատութիւններ: Իր հրապարակումներից մէկում Բոնարը գրում է հետեւեալը. «Եթէ որեւէ հայ ձեզնից օգնութիւն կը խնդրի, չվերաբերուէք նրան իբրեւ մուրացիկի, այլեւ յարգալից կերպով ու ներողամտութիւն հայցելով ձեռք մեկնէք նրան, քանզի չի կարելի ուրանալ ամէնքիս վրայ ծանրացած պատասխանատուութիւնը»:*

*Թողարկուել է սահմանափակ քանակութեամբ յատուկ բացիկ՝ նուիրուած Կրաֆտ-Բոնարի ծննդեան 140-ամեակին:*

## ՎԱՐԴԱՎԱՌ…

*Շարունակուած էջ 15-էն*

*տամունքի բոլոր տօնակատարութիւնների վրայ նոր պաշտամունքի պատմուճաններ փռեց: Աստղիկի, Ջրի, ծաղկի տօնը վերափոխել էր Նազովրեցի Յիսուսի Պայծառակերպութեան, Այլակերպութեան տօնին:*

*Յիսուսը, իր երեք առաքեալների՝ Պետրոսի, Յովհաննէսի ու Տեառնեղբայր Յակոբի հետ աղօթելու էին գնացել Թափոր լեռ: Նրա դէմքը արեւի նման պայծառացել էր, պատմուճանը լոյս էր դարձել, ամպերից դուրս էին յառնել Մովսէս ու Եղիա մարգարէները, որոնց հետ զրուցել էր նա, երկնքի կապոյտի վրայ Քրիստոսի Պայծառակերպութիւնը, Այլակերպութիւնն էր այդ: Երկինքն էր պատռուել, ամպեր էին որոտացել, Աստուծոյ ձայնն էր հնչել, Յիսուսը իր զաւակն է եւ մարդիկ կը լսեն իր պատգամները:*

*Հայոց նոր պաշտամունքը երբեք չկարողացաւ հայոց սրտերում արել իրենց հին աստուածներին նուիրուած տօնախմբութիւնները՝ Վարդավառ, Նաւասարդ, կրակի, Ջրի, ծաղկի, բերքի, արգասաւորութեան, պտղաբերութեան, մայրութեան տօները: Եւ Վարդավառին հայերը կարմիր վարդերով են վառում իրենց օճախները, լեռների լանջերի ջրի ակերի մօտ աւանդական ծիսակատարութիւններ կատարում, ջրով օծում իրենց մարմինները, որ հայրենի սարսուռով դողան իրենց հոգիները:*

# ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆ

*Շարունակուածէջ 13–էն*

*ծերն էին՝ բանաստեղծութիւններ, պատմուածքներ, առակներ, հեքիաթներ եւ այլն:*

*Աղայեանի դասագրքերի գերազանցութեան գրաւականը դպրոցի, մանկավարժութեան պահանջների բաւարարումն էր:*

*Աղաեանը խորն իմացութեամբ, գիտականօրէն եւ ամենայն խորաթափանցութեամբ անդրադարձել է ու վերլուծաբար տուել աշխատանքային ու ֆիզիքական դաստիարակութեան կարեւորութեան դերը:*

*1869 թ. Մայիսից ստանձնելով «Արարատ» հանդէսի խմբագրի պաշտօնը, առաջին իսկ համարում զետեղում է «Մի քանի խօսք մեր սիրելի ազգակիցներին» առաջնորդող յօդուածը, նուիրուած աշխատանքի գովքին, ըստ այդ յօդուածի աշխատանքը կենսական անհրաժեշտութիւն է, բնական պահանջ, «աշխատութիւն մարդու համար անէծք չէ... այլ օրհնութիւն», բոլոր արարածներն «ատում են ծուլութիւնը, որ մայրն է ամենայն չարեաց, եւ ապացուցանում աշխատութեան... երջանկութեան միակ աղբիւր լինելը, չաշխատողը ցեց է, որ ուտում է... ուրիշի աշխատանքը»: «Խորհրդածութիւն դաստիարակութեան վերաբերեալ» եւ այլ յօդուածներում, ինչպէս եւ գեղարուեստական գործերում նա աւելի համակողմանի վերլուծութեամբ տեսականօրէն հիմնաւորում է այդ հարցը: Խուսափել փափկասուն բալիկներ մեծացնելուց, փոքրուց ֆիզիքական կոփում եւ աշխատանք,... դպրոցը պէտք է շարունակի այն. ՚իւրաքանչիւր դպրոցին կից... մի արհեստանոց», ֆիզիքականը եւ մտաւորը պէտք է յաջորդեն միմեանց (ակտիւ հանգիստ), արհեստը ընդհանուր զարգացման վրայ բարեբար ազդեցութիւն ունի... արհեստներից դպրոցում ընդունելի է համարում կօշկակարութիւնը, դերձակութիւնը, կազմարարութիւնը, հիւսնութիւնը, երկաթագործութիւնը եւ այլն: «Արհեստը մի այնպիսի բան է, որ ամենայն մարդ պիտի գիտենայ, թէ ծառայ լինի, թէ տէր, թէ թագաւոր եւ թէ իշխան», եզրակացնում է «Անահիտ« հեքիաթում... եւ ապա՝ «աշխատութիւնը բոլոր առաքինութիւնների մայրն է, ինչպէս ծուլութիւնը ծնող է ամենայն մոլութեան» գրում է իր դուստր Անահիտին յղած նամակներից մէկում: Հետեւապէս՝ աշխատանքը կեանքի հիմքն է. առանց դրա չի եղել, չկայ եւ չի կարող լինել ոչ մի դաստիարակութիւն:*

*Աղայեանը նոյն խորաթափանցութեամբ պարզաբանում է նաեւ ֆիզիքական դաստիարակութեան հարցերը: Մեծ թերութիւն էր համարում, որ կեանքում, յատկապէս դպրոցում համարեա թէ տեղ չունէր ֆիզիքական դաստիարակութիւնը, առանց որի դաստիարակութեան միւս կողմերը թերի են: Մեզ պէտք են առողջ սերունդներ, դրա նախապայմանը «մարմնավարժութիւնն» է եւ աշխատանքը:*

*Ֆիզիքական դաստիարակութեան առանցքը «առողջ հոգին առողջ մարմնում» դրոյթն էր. «Երեխայութիւնից սկսած... ես իմ մարմինը պնդացրել եմ, պողպատ եմ շինել»... իսկ դրա գրաւականներն են՝ զբօսանքներ, շրջագայութիւններ, ֆիզիքական աշխատանք, մարզում, վարժութիւններ, խաղեր եւ այլն... Իր անձնական կեանքում Աղայեանը լայնօրէն օգտագործել է աշխատանքային ու ֆիզիքական դաստիարակութեան միջոցները եւ օրինակ ծառայել շրջապատի համար:*

*Որտեղ, ինչ պայմաններում էլ աշխատել է նա, ձգտել է իրագործել իր մտորումները, եւ դպրոց մտցնել աշխատանքային ուսուցումը եւ ֆիզիքական դաստիարակութիւնը: (Երեւանում աշխատելիս նախակրթարանում անցնում էր յատուկ մարմնամարզական պարապմունքներ, թեմականում՝ մարմնամարզութեան ժամեր, առաւօտեան լիցքային վարժութիւն պարապմունքներ... եւ ոչ միայն Երեւանում):*

*Փոքրերի զարգացման ամենալաւ միջոցներն են խաղը, զբօսանքները, որոշ վարժութիւններ, ուժերը ներածին չափ աշխատանք եւ նման զբաղմունքներ: «Խաղալն ու երգելը երեխայոց... յատկութիւններն են», յանցագործութիւն է նրանց զրկել այդ բաւականութիւնից: Ահա աշխատանքային ու ֆիզիքական դաստիարակութեան կարեւորութեան նրա գնահատականը:*

*«Նրա կեանքը անգիր անցկացաւ», նա «անգիր» ապրեց, եւ այն ամէնը, ինչ թողեց սերունդներին, իր «մեծութեան ու շնորհքի մի չնչին մասն է» միայն ցաւօք, շատ ու շատ «բան տարաւ իր հետ», քանի որ ժամանակ չունեցաւ թղթին յանձնելու այդ ամէնը:*

*Նա մեր ժողովրդի անաղարտ զաւակն էր, հայրենի բնութեան «անբաժան մասնիկը», մեր ձգտումների մարմնացումը... եւ այն ընկալեց ու գործեց ուսուցման գործընթացի եւ բնութեան գովերգմամբ, որն էր՝ «բնութիւնը համաչափութիւն եւ կանոնադրութիւն է սիրում, ոչ մի բան մարդկային հնարմանց մէջ այդ հրաշալի ներդաշնակութեանը այնքան համանմանելու պահանջ չունի, ինչքան մարդու կրթութեան արուեստը», սա բնայարմարութիւն է, մարդու եւ բնութեան միասնականութիւն, համաձայնուածութիւն:*

*Մեր «ուսուցիչների ուսուցիչ» Ղ. Աղայեանը եւ հայ դպրոցն ու մանկավարժութիւնը մի միասնութիւն են եւ մէկն առանց միւսի անհնար է պատկերել:*

### *ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ*

*Աղայեանը բազմաժանր գրող է: Առաջին տպագիր գործը՝ «Հարկավոր է օգնել չքաւորներին» բանաստեղծութիւնը, լոյս է տեսել «Մեղու Հայաստանի» լրագրում, 1862-ին:*

*«Արութիւն եւ Մանուէլ»-ով (1867) Աղայեանը հիմք է դրել ինքնակենսագրական վէպի ժանրին հայ նոր գրականութեան մէջ: Վէպում նա անողոք պայքար է յայտարարել խաւարին ու յետամնացութեանը՝ ընթանալով Աբովեանի բացած ճանապարհով: «Երկու քոյր» վիպակում արտացոլել է սոցիալական տեղաշարժերը ետռեֆորմեան հայ գիւղում, գիւղացու պայքարը հողի համար, որը նորութիւն էր հայ գրականութեան մէջ: Վիպակում շօշափուած են կնոջ հասարակական ակտիւութեան ու ազատ սիրոյ հարցերը: Հասարակական չարիքի նախապատճառը Աղայեանը համարել է սոցիալական անհաւասարութիւնը եւ առաջ քաշել սեփականութեան արդար բաժանման խնդիրը («Բաժանութիւն»,1890): Աղայեանի գեղարուեստական արձակի ուշագրաւ նմուշներից է «Սէրը արտաքսուած» ստեղծագործութիւնը (1889), որտեղ դեմոկրատիզմի դիրքերից տուել է իրականութեան ռեալիստական պատկերը: Մշակել է «Քէօր-օղլի» վիպերգութիւնից երեք դրուագ: Մարդու յարաբերութիւնների մասին Աղայեանի իտէալն աւելի ամբողջականօրէն արտայայտուած է «Տորք Անգեղ» պոէմում (1888), որի ատաղձը Մ. Խորենացու «Հայոց պատմութեան» մէջ եղած առասպելն է Անգեղեան Տորքի մասին:*

*Աղայեանը մեծ ժողովրդականութիւն է ձեռք բերել մանկական գրականութեան ասպարէզում: Մանկական բանաստեղծութիւնների առաջին ժողովածուն «Սրինգ հովուական»ը, լոյս է տեսել 1882-ին, յաջորդը՝ «Բանաստեղծութիւններ»-ը, 1890-ին: Հեքիաթներն Աղայանի ստեղծագործութեան մէջ մեծ կշիռ ունեն: Նա հեքիաթը համարել է իրական աշխարհի ու կեանքի ճշմարտացի պատկերման, մանուկների դաստիարակութjան կարեւոր միջոց, հետեւողականօրէն պաշտպանել չարը կռուով ոչնչացնելու սկզբունքը: Նրա հեքիաթների հերոսներն անձնական բարօրութիւնը ստորադասում են հանրային երջանկութեան գաղափարին: «Անահիտ»-ը (1881) հայ հեքիաթագրութեան լաւագոյն նմուշներից է:*

*Աղայեանը հարստացրել է մեր թարգմանական գրականութիւնը ռուս եւ արեւմտաեւրոպական դասական գրողներից կատարած թարգմանութիւններով ու փոխադրութիւններով: Նա թարգմանել է Ի. Կռիլովի, Ֆ. Շիլլերի, Հ. Հայնէյրի, Լ. Տոլստոյի, Վ. Շեքսպիրի գործերը: Առանձնապէս յիշատակութեան է արժանի Ա. Պուշկինի «Ոսկի ձկնիկ» հեքիաթի փոխադրութիւնը:*


**BUSINESS FOR SALE**

**ԾԱԽՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՆՊԱՐԱՏՈՒՆ**

Armenian Grocery, Meat & Deli for sale. $120,000. 1,800 sq ft in the heart of Burbank. Steady sales, chiller, meat counter & equipment alone is worth the asking price. Owner also selling Water & Ice store in Glendale – coffee, teas, soda, snacks. Asking $40,000 - makes $2,000 a month profit.

Contact Mary Sanchez - 310-539-8300

*ԾԱԽՈՒ Է ՄՐԳԱՀԻՒԹԻ ԽԱՆՈՒԹ: Պըրպէնքի կեդրոնին մէջ ծախու է Franchise մրգահիւթի խանութ: մը: Թարմ մրգահիւթ եւ smoothies: Սեփականատէրը նոր մայր դարձած է եւ կ՚ուզէ ծախել խանութը: Մենք կը հովանաւորենք առաջին երկու շաբաթը: Ծախու գին 10,000 տոլար: Գնողը կը ստանձնէ մնացեալ 7 տարուան վարձքի համաձայնութիւնը եւ մնացած պարտքի 60%: Franchise-ը 20 տարուայ է, իսկ խանութը՝ 3 տարուայ: Հեռաձայնել Քոլէթին (818) 324-1758 թիւին:*

****

BUSINESS FOR SALE: Franchise Juice Store located in the heart of Downtown Burbank for sale. Store offers fresh squeezed juices and smoothies. Owner is a new mother and does not have time to run the store.

Complete turnkey business ready for you to step in. Will provide training for the first 2 weeks. Only asking $10,000! Buyer will take over remaining 7 year lease and assume 60% of remaining SBA loan.

Franchise is over 20 years old and store location is 3 years old.

Contact Colette at 818-324-1758



**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:

**G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104**

**Norserount@sbcglobal.net**



ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՓԱՌԱՏՕՆ

ԿԻՐԱԿԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ 20, 2009

VERDUGO PARK, GLENDALE



**Ձեր Ծանուցումները Վստահեցէք**

**«Մասիս» Շաբաթաթերթին**

**T: (626) 797-7680 F: (626) 797-6863**

**massis2@earthlink.net**

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ



*ԱՂԱՒՆԻ ՍԱԹԱՄԵԱՆ*
*(Ծնեալ Թրիբոլի, Լիբանան 1932)*

*Հանգուցեալ ԱՂԱՒՆԻ ՍԱԹԱՄԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով յաւարտ Ս. Պատարագի, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 26 Յուլիս, 2009, Մոնթեպելլոյի Ս. Խաչ Եկեղեցիին մէջ՝ 900 W. Lincoln Ave., Montebello, CA 90640:*

*Սգակիրներ՝*
*Դուստրը՝ Անուշ Մանուկեան եւ զաւակը՝ Ռիթա*
*Որդին՝ Յարութ Սաթամեան եւ զաւակները՝ Սարին եւ Դալար*
*Որդին՝ Տէր եւ Տիկ. Հրաչ եւ Մարինա Սաթամեան եւ զաւակները՝ Թամար եւ Թանիա*
*Որդին՝ Միհրան Սաթամեան եւ զաւակը Քէնթըլ*
*Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Ռաֆֆի եւ Անի Տէրմէնճեան*
*Թոռնիկը՝ Տէր եւ Տիկ. Դանիէլ եւ Հուրի Մանուկեան*
*Քոյրը՝ Սիրվարդ Արապաճեան եւ զաւակը Գարլօ*
*Քոյրը՝ Մարկրիթ Թատճէ եւ զաւակները՝ Ժոտի եւ Լէյլա*
*Տիկ. Զապէլ Արապաճեան եւ զաւակները՝ Սոնա, Նորա, Սոֆիկ եւ Լիզա*
*Քոյրը՝ Փոլին Ալթունեան եւ զաւակը Արմէն*
*Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Խաչիկ եւ Սեդա Արապաճեան եւ զաւակները՝ Մարալ եւ Յարութ*
*Մօրեղբայրը՝ Յովհաննէս Փէլթէքեան եւ զաւակունք*
*Մօրեղբայրը՝ Տէր եւ Տիկ. Վարդան Փէլթէքեան եւ զաւակունք*
*Մօրեղբայրը՝ Տէր եւ Տիկ. Վարուժան Փէլթէքեան եւ զաւակունք*

*Հանգուցեալի յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:*

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

*ՏՕՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆԻ մահուան տխուր առիթով փոխան ծաղկեպսակի «Մասիս» շաբաթաթերթին կատարուած են նաեւ հետեւեալ նուիրատուութիւնները, որոնց համար թերթի տնօրէնութիւնը շնորհակալութիւն կը յայտնէ:*

| | |
|---|---|
| *Տէր եւ Տիկ. Սարգիս Գալթաքճեան* | *$200* |
| *Տէր եւ Տիկ. Յակոբ Վարդիվառեան* | *$100* |
| *Տէր եւ Տիկ. Սինան Սինանեան* | *$100* |
| *Իսահակեան ընտանիք* | *$50* |

## ԲԱՆՋԱՐԵՂԷՆՆԵՐՈՒ ԲՈՒԺԻՉ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

### *ԿԱՆԿԱՌ*

*Իւրօրինակ տեսքով այս բոյսի հայրենիքը Հիւսիսային Ափրիկէն է: Ան հարուստ է փոթասիումով, քալսիումով, երկաթով եւ ծծումբով: Տերեւները կը պարունակեն «սինարին» կոչուող նիւթը, որը կը նպաստէ մաղձի արտադրմանը եւ ունի լեղամուղ յատկութիւն: Կանկառը թելադրելի է լեարդի հիւանդութիւն ունեցողներուն, յատկապէս ալքոլ չարաշահողներուն: Ան կը բարձրացնէ սեռային աշխուժութիւնը, սերմնահեղուկի արտադրութիւնը, ունի միզամուղ յատկութիւն, կը նպաստէ քոլեսթերոլի քանակի նուազումին արեան մէջ, կանխելով երակներու կարծրացումը:*

### *ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆ-ԿՈՐԵԿ*

*Անոր մշակումը սկսած են Մեքսիքայի մէջ: Ան բրինձի եւ ցորենի կողքին կը նկատուի գլխաւոր սննդարար ընդեղէն մը: Անոր 100 կրամը կը պարունակէ 88 քալորի:*

*Եփած եգիպտացորենը աւելի սննդարար է քան հումը: Եփելէ ետք կ՚աւելնայ անոր հականեխիչ ազդեցութիւնը, իր ֆերիլիք կոչուող նիւթի շնորհիւ է որ 100 առօ հարիւրով կ՚աւելնայ 50 վայրկեան գայն եփելէ ետք: Եգիպտացորենը հարուստ է բնաթելով, որը կը նպաստէ «գէշ» քոլեսթերոլի քանակի նուազումին: Անոր մազմզուկներու եփուկը կ՚օգտագործուի տարբեր պատճառներէ առաջած այտուցներու, միզամանի բորբոքումին, արեան մակարդելիութիւնը եւ պոլիռուպինի քանակը պակսեցնելու համար եւ շաքարախտի ու ախորժակի կորուստի պարագային: Մազմզուկները կէս ժամ ձգել եռացած ջուրի մէջ եւ խմել որպէս միզեցուցիչ եւ մաքրող թէյ, որ աւելի հաճելի դարձնելու նպատակով կարելի է աւելցնել մեղր կամ կիտրոնի հիւթ: Եգիպտացորենը որպէս թեթեւ եւ սննդարար ուտելիք նախընտրելի է երախաներուն:*

### *ՍՈՒՆԿ*

*Սունկերը մասնաւոր սննդային արժէք չեն ներկայացներ, մանաւանդ արհեստական աճեցուածները: Սունկը կը պարունակէ մինչեւ 90 առ հարիւր ջուր, նաեւ մակնէզիում: Առանց կեղեւը հեռացնելու եփելու պարագային, ի յայտ կու գան անոր օգտակար յատկութիւնները: Օգտագործելով գայն սնունդի մէջ, կը բարձրանայ օրկանիզմի դիմադրողականութիւնը: Սունկերը ճիշդ չորցնելու պարագային, կը պահեն իրենց սննդային արժէքը: Պէտք է զգուշանալ մասնաւորաբար ոչ մաքուր տեղերէ, թունաւոր, պատահական սունկեր հաւաքելէ: Կեչու ծառի սունկը չագրան, ունի կարեւոր բուժական նշանաւութիւն չարորակ ուռերու եւ ստամոքս-աղիքայի խոցերու պարագային:*

### *ԱՐԵՒԱԾԱՂԻԿ*

*Շնորհիւ պարունակած չյագեցած ճարպաթթուներու, կը կարգաւորէ քոլեսթերոլի փոխանակութիւնը: 20 առ հարիւր պարունակած փրոթէինի մէջ կան այն բոլոր ամինոթթուները, որոնց շնորհիւ կը կատարուի ճարպային փոխանակումը: Արեւածաղիկի 100 կրամ սերմը կը պարունակէ 310 կրամ մակնէզիում, որը անհրաժեշտ է սիրտ-անօթային համակարգի բնական գործունէութեան համար:*

*Նախընտրելի է սերմերը բովել ուտելէ առաջ, սակայն պէտք է զգուշանալ այրած սերմեր օգտագործելէ:*

### *ԱՒԿԱՏԱՆՁ (ԱՒՕՔԱՏՕ)*

*Բաղդատած միւս պտուղներու հետ ան կը պարունակէ օրկանիզմի համար անհրաժեշտ բոլոր նիւթերը, բացի վիթ. Ճ-էն: Ամենաշատ վիթ. է պարունակող բանջարեղէնն է՝ հարուստ է փրոթէյնով, երկաթով եւ պղինձով: Սննդային արժէքով համեարժէր է միսին: Ճարպերու բարձր պարունակութեան հետեւանքով, մինչեւ 30 առ հարիւրով կը գրգռէ լեղուցքը, արտադրելով լեղի, ծանր եւ իւղոտ ճաշերէն ետք: Աւկատանձը օգտակար է այն անձերուն, որոնք կշիռքի յաւելումի պէտք ունին: Օգտակար է յատկապէս ապաքինման շրջանի մէջ գտնուող անձերուն: Վերոնշեալ նպատակներու հասնելու համար, օրական ուտել 1-2 հատ աւկատանձ: Անոր պարունակած շաքարը արագ կը ներծծուի, իսկ փափուկ մասը դիւրութեամբ կը լուծու ջուրի մէջ, վերածուելով խմելու համար հաճելի հիւթի: Աւկատտանձը թելադրելի չէ սննդականոնի հետեւող անձերուն, սակայն օգտակար եւ հաճելի սնունդ է փոքրերու համար: Երկարակեցութեան ձգտողները անպայման սնունդի մէջ պէտք է գայն ընդգրկեն:*

## ԱՅՑ ՌԱՖՖՈՒ ՇԱՌԱՒԻՂԻ ՄՆԱՑՈՐԴԱՑ

*Շարունակուածէջ 17-էն*

*վերցնում, գործ հայթայթում, ճամբորդութեան դիւրութիւններ ստեղծում եւ այլն:*

*Հ. Որտե՞ղ էր գտնւում Հայաստանի դեսպանատունը:*

*Պ. Շէփըրդս Բուշ-ում, որը Բ. պատերազմի ժամանակ գերմանացիները ռմբակոծեցին շէնքը:*

*Հ. Դուք անձամբ հանդիպե՞լ էք Աննա Ռաֆֆուն ու Արամին:*

*Պ. Ոչ, Աննա Ռաֆֆին մահացել է 1920 թուին, իսկ նրանից վեց ամիս առաջ, իր որդին Արամը՝ 1919 թուին, որոնց դիակները Արշակը, իմ ամուսինը, գմռսել է տալիս, որ փոխադրի Հայաստան, կամ Թիֆլիս՝ Ռաաֆու գերեզմանի մօտ, սակայն քաղաքական վիճակը խառնւում է ու չի յաջողում:*

*Հ. Ե՞րբ է մահացել ձեր ամուսինը:*

*Պ. 1946 թուի Օգոստոս 12-ին վախճանուեց, որի մարմինն ես զմռսել տուի ու դրեցի իր մօր ու եղբօր մօտ: Յուսալի է՝ մի օր փոխադրենք Հայաստան:*

*Հ. Արդեօ՞ք նիւթական լաւ միջոցի տէր էր ձեր ամուսինը:*

*Պ. Ոչ, շատ վատ էր: 1926ին մեզ հրաւիրել էին Բուկինգհամ Փալաս, սակայն դրամ չունէր, որ ինձ լաւ հագցնէր ու չգնացինք:*

*Հ. Դուք ի՞նչ եկամուտով էք ապրել ձեր ամուսնու մահից յետոյ:*

*Պ. Հիւանդապահուհի եմ եղել:*

*Հ. Ձեր քոյրերը կենդանի՞ են:*

*Պ. Մենք հինգ քոյր էինք, որոնցից երեքը կենդանի են եւ ապրում են Լոնտոնում բոլորն էլ հայերէն են խօսում:*

*Հ. Կրկին այցելե՞լ էք Իրան:*

*Պ. Ո՛չ, փորձեցի Մոսադդեղի կառավարութեան օրերին, 1952ին, բայց թոյլ չտուին որպէս անգլիացի մտնեմ Իրան:*

*Հ. Արդեօ՞ք Ռաֆֆու եւ տղաների գրութիւններից ու փաստաթղթերից որեւէ բան ունէք ձեր մօտ:*

*Պ. Ոչ, 1947 թուին մէկ արկղ Ռաֆֆու ձեռագրերից, փաստաթղթեր ու նրա «Սալբի» վէպի Բ. եւ Գ. հատորներն, իր ձեռագրով, յանձնել եմ Լոնտոնի Սովետական դեսպանատունը,ո ր փոխադրեն Հայաստան, բայց յայտնի չէ, թէ որտե՞ղ է գնացել: Ափսոսում եմ «Սալբի»ների համար, եթէ կորած լինեն, քանի որ բնաւ չեն տպագրուել դրանք:*

*Հ. Որեւէ բան գիտէ՞ք մեծ Ռաֆֆու կեանքից:*

*Պ. Գիտեմ շատ բաներ, լսել ու կարդացել եմ: Գիտեմ նաեւ որ նրա «Հարեմը» գրուածքի համար, պարսիկները ուզել են նրան գլխատել, սակայն մի պարսիկ ընկեր նրան փախցրել է:*

*Հ. Որեւէ ասելիք ունէ՞ք հայ ժողովրդին:*

*Պ. Պարսկահայերը իմ հանդէպ վերին աստիճանի բարեացակամ են ու սիրալիր, բոլորից էլ շնորհակալ եմ:*

*Հարցազրոյցը վերջացնելուց յետոյ ճանապարհւում ենք դէպի Քէնզըլ Րայզ գերեզմանատուն, որ Լոնտոնի խառնիճաղանճ տարածքում բաւականին դժուար գտանք:*

*Դա մի հսկայական գերեզմանատուն է, որի միջու մի մեծ մատուռ է կառուցուած ու նրա ներքեւում այդ պանդէոնն է, որը մի հոյակապ խոր ներքնայարկ շէնք է բազմաթիւ թեւերով ու բազմաթիւ կամարներով ու իւրաքանչիւր կամարի ներքեւ հարիւրաւոր մութ նկուղներ զանազան յարկերով ու իւրաքանչիւր նկուղում պահ են դրուած քանի դագաղներ: Հեշտութեամբ ենք գտնում մեր ուզած դագաղներն, որոնք արդէն փտել էին Լոնտոնի խոնաւութիւնից, որոնց պղնձեայ անուանատախտակների վրայ անգլերէն լեզուով փորագրուած կարդում ենք հետեւեալը.*

*Աննա Մելիք Յակոբեան Ռաֆֆի, Ծնունդ 20 Մայիս 1848, մահ՝ 17 Յունիս 1920:*

*Արամ Մելիք Յակոբեան Ռաֆֆի - Մահացած 12 Նոյեմբեր 1919 թ. 43 տարեկան հասակում, ( 1876ին ծնած):*

*Արշակ Մելիք Յակոբեան Ռաֆֆի - Ծնունդ՝ 24 Մարտ 1879, մահ՝ 1946 Օգոստոս 12:*

*Խոր յարգանք ենք մատուցում երեք դիակներին, նկարւում ենք նրանց առջեւում ու տխուր վերադառնում տուն:*

# ՄԱՐԶԱԿԱՆ

## ԱՐԹՈՒՐ ԱԲՐԱՀԱՄԻ ԱՌԱՋԻՆ ՄՐՑԱԿԻՑԸ ԹԵՅԼՈՐՆ Է



*Նիւ Եորքի «Մեդիսոն Սկվեր Գարդէն» մարզասրահում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ ամերիկեան SHOWTIME հեռուստաալիքի ղեկավարութիւնը պաշտօնապէս յայտարարել է 6 ուժեղագոյն միջինքաշային բռնցքամարտիկների մասնակցութեամբ մրցաշար անցկացնելու մասին: Նրանց թւում են IBF-ի վարկածով աշխարհի չեմպիոն Արթուր Աբրահամը, WBA-ի վարկածով աշխարհի չեմպիոն Միքել Կեսլերը, WBC-ի վարկածով չեմպիոնական գօտու տեր Կառլ Ֆրոխը, միջին քաշում աշխարհի նախկին ախոյեան Ջերմեն Թեյլորը, ինչպէս նաեւ Անդրէ Դիրելը եւ Անդրէ Ուորդը:*

*Ինչպէս գրում է «Ազգ»ը, երեք փուլով անցկացուելիք նախնական հանդիպումների արդիւնքներով առաւելագոյն քանակի միաւորներ վաստակած չորս բռնցքամարտիկները պայքարը կշարունակեն կիսաեզրափակիչում՝ վիճարկելով եզրափակիչի ուղեգիրը: Այնպէս որ իւրաքանչիւր բռնցքամարտիկ մրցաշարի ընթացքում նուազագոյնը 3 մէնամարտ կանցկացնի: Իւրաքանչիւր յաղթանակի համար բռնցքամարտիկը 2 միաւոր կվաստակի, ոչ-ոքիի դէպքում՝ մէկ միաւոր:*

*Մրցաշարը կսկսուի այս տարուայ Հոկտեմբերին եւ կաւարտուի 2011-ի Նոյեմբերին: Արդէն յայտնի են առաջին փուլի զոյգերը: Արթուր Աբրահամը մենամարտելու է Ջերմեն Թեյլորի հետ, Ֆրոխի մրցակիցը կլինի Դիրելը, Կեսլերը կպայքարի Ուորդի դէմ: Մենամարտերի անցկացման ժամկետներն ու վայրերը շուտով կհաստատուեն:*

*Մամուլի ասուլիսին ներկայ են գտնուել մրցաշարի մասնակից բռնցքամարտիկները, որոնք իրենց կարծիքն են արտայայտել: Արթուր Աբրահամը հետեւեալն է ասել. «Մշտապէս ձգտել եմ աշխարհի ուժեղագոյն բռնցքամարտիկների հետ մենամարտել: Երազանքս իրականութիւն է դառնում: Ցանկանում եմ դառնալ աշխարհի ուժեղագոյն բռնցքամարտիկը միջին քաշում»: Աբրահամի մրցակից Թեյլորը եւս լաւատեսօրէն է տրամադրուած. «Կարիերայիս ընթացքում քիչ սխալներ չեմ գործել, ուստի պատրաստւում եմ ամէն ինչ սկսել նորից եւ ամբողջովին նուիրուել բռնցքամարտին»:*

*Մրցաշարի կազմակերպիչները տեղեկացրել են, որ 2,5 ամիս է պահանջվել զանազան հարցեր կարգաւորելու համար: Սկզբում նրանք պայմանաւորուել են եւրոպացի բռնցքամարտիկների հետ, իսկ երբ աւարտել են բանակցութիւններն ամերիկացիների հետ, զբաղուել են մրցակարգի մշակմամբ:*

## ՀԱՅԱԶԳԻ ՇԱԽՄԱՏԻՍՏԸ ԴԱՐՁԵԼ Է ԲԵԼԳԻԱՅԻ ԱԽՈՅԵԱՆ

*Բելգիայում բնակուող միջազգային վարպետ Մհեր Յովհաննիսեանը նուաճել է այդ երկրի շախմատի չեմպիոնի տիտղոսը: Ինչպէս գրում է »«Ազգ»ը, նա 9 հնարաւորից վաստակել է 6,5 միաւոր: Նոյնպիսի արդիւնքի ր հասել նաեւ Ալեքսանդր Տկեուբաձեն: Ախոյեանին որոշելու համար նրանց միջեւ արագ շախմատի կանոններով մրցախաղ է անցկացուել, որում յաջողութիւնն ուղեկցել է հայ շախմատիստին:*

## ԳՈՌ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԸ ԱՐԾԱԹԷ ՄԵՏԱԼ ՆՈՒԱՃԵՑ ԵՒՐՈՊԱՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՓԱՌԱՏՕՆՈՒՄ

*Յուլիսի 18-ին Ֆինլանդիայի Տամպերէ քաղաքում մեկնարկել է Եւրոպայի երիտասարդական օլիմպիական փառատօնը: Հայաստանի 20 մարզիկներ ներկայացնում են ձիւդօ, աթլետիկա, հեծանվային սպորտ, թենիս, լող եւ մարմնամարզութիւն մարզաձեւերը:*

*Յուլիսի 21-ին ձիւդօիստ Գոռ Յարութիւնեանը (50 կգ, Վանաձոր) տարաւ 4 յաղթանակ, կրեց 1 պարտութիւն, գրաւեց 2-րդ տեղը եւ արժանացաւ արծաթէ պարգեւի: Հայաստանցի մէկ այլ ձիւդօիստ Ռոզա Խաչատրեանը (48 կգ, Երեւան) 2 պարտութիւն կրեց եւ դուրս մնաց պայքարից:*

## «ՓԻՒՆԻԿԸ» 0-3 ՀԱՇՒՈՎ ՊԱՐՏՈՒԵՑ ԶԱԳՐԵՊԻ «ԴԻՆԱՄՈՅԻՆ»

*Յուլիսի 21-ին ֆութպոլի Եւրոպայի չեմպիոնների գաւաթի խաղարկութեան որակաւորման երկրորդ փուլի պատասխան խաղում Հայաստանի չեմպիոն «Փիւնիկը» 0:3 հաշւով զիջեց Զագրեբի «Դինամոյին»: Երեւանում կայացած առաջին խաղում գրանցուել էր ոչ ոքի՝ 0-0: 2 հանդիպումների արդիւնքով յաջորդ փուլ անցան Զագրեբի ֆուտբոլիստները:*

*Այսպիսով Հայաստանի «Բանանցը», «Միկան» եւ «Փիւնիկը» դուրս մնացին յետագայ պայքարից:*

*Յուլիսի 23-ին Երեւանի «Հանրապետական» մարզադաշտում կկայանայ Կապանի «Գանձասարի» պատասխան հանդիպումը հոլանդական «Բրեդայի» հետ: Առաջին խաղում կապանցիները մրցակցին զիջել էին 0-6 հաշւով:*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԱՆՐՈՐԴՆԵՐԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՒՈՒՄ ԵՆ ԵՒՐՈՊԱՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆԸ

*Յուլիսի 25-ից Օգոստոսի 2-ը Շուեդիայում կ՚անցկացուի ծանրամարտի Եւրոպայի երիտասարդական առաջնութիւնը, որտեղ Հայաստանը կներկայացնեն Սմբատ Մարգարեանը (56 կգ, Երեւան), Ռուբէն Մամոյեանը (62 կգ, Էջմիածին), Հայկ Յակոբեանը (+105 կգ, Գիւմրի), Ռուբէն Ալեքսանեանը (+105 կգ, Արարատ), Ալլա Սամուէլեանը (58 կգ, Բաղրամեան) եւ Աստղիկ Գալստեանը (63 կգ, Երեւան):*

*Տղաների թիմը Յուլիսի 13-ից ուսումնամարզական հաւաք է անցկացնում Աբովեանում, իսկ աղջիկները իրենց անձնական մարզիչների հետ նախապատրաստւում են տեղերում:*


**ՔԱՋ ՆԱԶԱՐ**
**ՈՒԴԻԴ ԵԹԵՐ ՇՕ**

**Ամէն Կիրակի երեկոյեան**
**ժամը 10:00-ից 12:30**
**Կլէնտէյլի 280-րդ կայանից**

**ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ**

PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրւում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

*Մանրամասների համար հեռաձայնել՝*
**(818) 246-0125**

Վարձման գներն են՝

| | |
|---|---|
| Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ | $ 400 |
| Long Weekend-ների համար՝ | $ 500 |
| Մէկ շաբաթուայ համար՝ | $ 675 |
| Մէկ ամսուայ համար՝ | $ 1450 |

**ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ**
**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ**

**CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ**
**(ԿԼԷՆՏԷՅԼ, ՊԸՐՊԷՆՔ, ԼԱ ՔՐԷՍԷՆԹԱ)**
**GLOABCAST SATELLITE**
**ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00**

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**
**Enclosed a check for (one year)**
*** $50,00 for USA**
*** $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.**
*** $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.**
**Name: ----------------------------------------**
**Address: ----------------------------------------**
**City: --------- State:--------- Zip Code:------**
**Country: -------------**
**Tel :------------------------ Fax : -------------------------**